

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՂԺՈՂԿՈՄԱՏ

ՅՈՒՂԱՏՆՑՅԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉՆԵԼԻ ԳՐԱԳԵՐԱՆ № 22 (113)

Բ. Մ Ա. Մ Յ Ա. Ն

Բ Ա. Մ Բ Ա. Կ Ի

Մ Շ Ա. Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1981

633.5

Մ-22

24 SEP 2010

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄՐԱՏ
ԳՅՈՒՂԱՏՆՑՅՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՅՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ N 22 (113)

Հայր սրտե՛ն Գոհարա՛ն

633.5
Մ. 29 *այ*

Բ. ՄԱՄՅԱՆ - *այ*. 16. 11. 1931թ.

ՅԻՒԿԱԼ

ԲԱՄԲԱԿԻ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1991



703
38

Հրատ. № 1522

Գրառույթ. № 6147 (բ). Գատվեր № 837. Տիրած 7.000
Պետերատի տպարանն Յերևանում

I. ԲԱՄԲԱԿԻ ԲՈՒՅԱԸ

1. ԻՆՉՊԻՄԻ ԿԼԻՄՍ. ՅԵ ՍԻՐՈՒՄ ԲԱՄԲԱԿԸ

Բամբակը շատ պահանջկոտ է դեպի տաքութիւնը և արևի լույսը. դրա համար ել Հայաստանում նրա մշակութիւնը տարածված է Արարատյան դաշտավայրում, ուր ամառը լինում է շատ շոգ և յերկար ամիսներ յերաշտոտ:

Սակայն այդպիսի կլիմայական պայմաններում անշուշտ անհրաժեշտ է ջուր փոռոգելու համար, փորը և փորոշում է նրա ընդարձակելու և մշակելու հնարավորութիւնները:

Բամբակի կանոնավոր աճելու համար անհրաժեշտ է դարնան և աշնան յեղանակների համար առնվազն 15 աստիճան տաքութիւն Յելսիի ջերմաչափով. իսկ ամառը 30 աստիճան:

Նա շատ զգայուն է դեպի ցրտերը և անգամ յերբ տաքութիւնն իջնում է մինչև ցրտառութիւն մեկ աստիճանին, նա տրդեն ցրտահարվում է, փորն և ազդում է նրանից սպասվելիք բերքի վրա:

Վատ են անդրադառնում նրա նորմալ աճման վրա նաև անձրեփները: Ցանքսից մինչև հասունանալը հաճախակի տեղացող անձրևները խանգարում են նրա նորմալ զարգացումը՝ բույսը սկսում է փարթամ աճել ի վնաս բերքի և ծաղկման շրջանում ցերեկվա անձրևները թույլ չեն տալիս կատարվի կանոնավոր բեղմնավորում, վորից բամբակի ծաղիկներն ամբողջապես թափվում են և այլևս չեն առաջանում կնգուղներ:

Այդ տեսակետից մեզ մոտ բամբակի մշակութային համար կան շատ նպաստավոր պայմաններ՝ այն է ինչպես վերը հիշվեց ամառը լինում է շատ շոգ, լեբկար ժամանակ չեն տեղում անձրևներ և դաշտավայրի հողամասերը բուրբը ջրարբի են:

Միակ բացառականը դա վաղ գարնան և ուշ աշնան ցրտերն են, վորոնք բավականին կրճատում են նրա աճման ժամանակամիջոցը:

2. ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂԵՐ Ե ՍԻՐՈՒՄ ԲԱՄԲԱԿԸ

Բամբակը սիրում է թափանցիկ, պարարտ և խոր հողեր, վորոնց վրա աճում է շատ լավ, վորովհետև նրա արմատները հեշտուլթյամբ խորանում են նրանց մեջ և տարբեր խորութիւններից սնունդ վերցնում:

Հայաստանում հողերի տեսակները շատ բազ-

մազան են. անգամ գյուղի տարբեր ստանաներում կան տարբեր վորակի հողեր, վորոնցից և ստացվում է տարբեր քանակի բերք:

Մեզ մոտ պատահում են կավային հիմք ունեցող սեահողեր, փտահողով ավազահողեր, ծանր կավային կազմվածք ունեցող հողեր, խճահողեր, կավոտ ավազահողեր, ավազոտ կավահողեր, կրային մասերով հարուստ «բող» հողեր, աղահողեր-«շորաքյաթներ» և այլն: Այս բոլոր հողերում աճում է բամբակը, սակայն վորոշ հողերի վրա կարիք է լինում անցկացնելու անհրաժեշտ բարելավումներ՝ մեղիորատիվ աշխատանքներ:

Վորքան բազմազան են հողերի տեսքերն, այնքան էլ տարբեր են նրանց վրա բամբակի մշակման լեղանակները:

Որինակ ծանր կավային հողերը բամբակ մշակելու համար անպետք են և շատ քիչ արդյունք կտան, յեթե չպարարտացվեն գոմաղբով: Գոմաղբը լավացնում է նրա կազմվածքը, առանց վորի բամբակի նուրբ ձիւերը շատ դժվար են դուրս գալիս—անձրևներից հետո հողի լեբեսը կեղև է բռնում, վորն ինչպես ասում են խեղդում է բույին, վորովհետև հողի մեջ անհնարին է դառնում ողի ազատ թափանցելը, վորը շատ կարևոր է արմատի կանոնավոր զարգացման հա-

մար: Հողը բարեփոխվում է իր կազմածքով նաև յոնջա ցանելուց, վորը միևնույն ժամանակ և ուժեղացնում է սննդավետ նյութերով:

«Շորաքյաթ» կամ աղահողերը մինչև ջրով չըլվացվեն—չազատվեն աղերից, անպետք են բամբակի համար: Դրա համար ուշ աշնանը բաց են թողնում մեծ քանակությամբ ջուր, վողողում են ամբողջ հողամասը. ջրում լուծվում են նրա աղային մասերը, վորը հեռացվում է հետո առանձին խոր փորված առուներով:

Բամբակը չի սիրում ճահճոտ և խոնավոտ հողեր, ինչպես և ամուր հիմք ունեցող բարակ շերտահողեր, վորովհետև վերջին դեպքում արմատը հնարավորություն չի ունենում հողում խորանալու, սնունդ մատակարարելու, վորից և բամբակի թփերը մնում են շատ ցածր և աննրշան բերքով:

II. ԲԱՄԲԱԿԻ ՏԵՂԸ ՅԱՆՔԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամեն մի տեսակի բույս յուրահատուկ պահանջ ունի դեպի հողը և նրանցից ամեն մեկը տարբեր սնունդ է շարունակ վերցնում հողից: Յեթե մի վորևիցե բույս 4—5 տարի շարունակ մշակվում է նույն հողում, վերջը հողն ուժասպառ է լինում և չի տալիս վերջին տարին այն

բերքը, ինչ վոր տվել է առաջին տարին. այդպիսի հողերին ասում են ուժասպառյեղած տրվյալ բույսի նկատմամբ: Սակայն այդ նույն հողում յեթե մշակենք մի այլ բույս կարող է ստացվել լավ բերք. դա կնշանակի նա ել իր հերթին հողից վորպես սնունդ վերցնում է հողի մի այլ տեսակի սնունդը:

Որինակ բամբակը, հացահատիկը և այլն մեծ պահանջ ունեն ազոտ կամ բորակածին և ֆոսֆոր կոչված պարարտանյութերի կամ սնունդի և ամեն տարի սխտեմատիկորեն հողից խլում են այդ տեսակի սնունդի զգալի մասը, այն ինչ յոնջան, վիկան, յերեքնակը (խնձորախտոր, մաշը, սոյան և այլ պատենավոր բույսերը ընդհակառակը հողն ուժեղացնում են ազոտով կամ բորակածինով և միևնույն ժամանակ լավացնում հողի կազմությունը: Այդ է պատճառը, վոր առհասարակ յոնջայից և նրա ցեղի բույսերից հետո շատ լավ բերք է ստացվում թե բամբակի և թե հացահատիկի ցանքսերից:

Մրանից յեզրակացություն, վոր ամեն տարի իրար վրա չի կարելի միևնույն տեղը միևնույն բույսը մշակել: Իսկ յեթե ստիպված ենք կամ կարևոր է այդ կրկնությունը կատարել, պետք է այնպես խելացիորեն դասավորել բույսերի հաջորդականությունը, վորպեսզի պահպան-

վի թե հողի բերրիութունը, թե կազմվածքը և թե շատ բերք ստանանք:

Ցանքսի հաջորդականության կամ ինչպես ասում են ցանքսաշրջանառության կարևորությունը հասկանալու համար պետք է խմանալ, վոր՝

1. Տարբեր բույսեր տարբեր սնունդ են վերցնում հողից և զանազան հողաշերտերն ոգտագործում, վորովհետև նրանց արմատներն ունեն տարբեր յերկարութուն:

Որինակ բաժբակը և յոնջան շնորհիվ իրենց խորը գնացող արմատների կարող են սնունդ վերցնել հողի ամենաստորին շերտերից, քան հացաբույսերը:

2. Կան բույսեր, ինչպես որինակ կարտոֆիլը, կաղամբը, ճակնդեղը և այլն, վորոնք ամառվա ընթացքում շարունակ մշակվում են՝ — բուկ է տրվում, փխրեցնվում և այլն և շնորհիվ այդ հանգամանքի հողն ավելի է բերրիանում և նրանցից հետո այլ կուլտուրաներն ավելի հաջող են բսնում — մեծ բերք տալիս:

3. Չանազան բույսեր զանազան քանակի և սննդավետ արմատի մնացորդներ են թողում հողում, վորոնք հետագայում փթելով պարարտացնում են հողերը:

Որինակ յերկար խորացող արմատները հո-

ղի ամենաստորին շերտի սնունդը կարծեք վեր են բարձրացնում վերնաշերտը և իրենց նեխվելուց հետո վորպես զգալի մասսա սնունդ ծառայում հաջորդ մշակվող բույսերին:

4. Ինչպես վերը հիշվեց պատենավոր բույսերն (յոնջա, կորնգան, վիկա, սոյա, մաշ և այլն) ուժաղացնում են հողը, շնորհիվ իրենց խորը գնացող արմատների, վորոնց վրա կան բազմաթիվ ուռուցքներ — պալարներ: Ահա այդ ուռուցքներում ապրում են միլիոնավոր մանրեններ — բակտերիաներ, վորոնք ընդունակ են ամենաթանգարժեք պարարտանյութերից, ինչպիսին է բորակածինը, ողից կապել և հողը դրանով հարստացնել: Յե՛վ յերբ յոնջան ցելվում է այդ արմատներն իրենց պալարներով նեխվում են և հողն ուժեղացնում, վորի շնորհիվ և մշակվող բույսերը հաջողությամբ աճում են և լավ բերք տալիս:

5. Պե՛տք է ինկատի ունենալ կարևոր հանգամանքներից ել այն, վոր բույսը յերբ շարունակ մշակվում է միևնույն հողում, առաջ են գալիս յուրանատուկ հիվանդություններ, վորոնք այլ բույսերի համար միանգամայն անփաս են: Հարկավոր է լինում այդպիսի դեպքերում միջանի տարի շարունակ այդ հողում այլևս չմշակել այդ բույսից, վորպեսզի հիվանդությունը կամ փասատուները կտրվեն:

Ահա վերոհիշյալ հանգամանքներն են, վոր ստիպում են մտցնել ցանքսաշրջանառություն կամ սերմնափոխություն. այլ խոսքով բույսերի խելացիորեն դասավորված հաջորդականության կարգ, վորպեսզի թե հողը միշտ մնա բերրի, նպաստավոր կազմվածքով, ստացվի լավ բերք և թե չառաջանան վտանգավոր հիվանդություններ, վորոնք կարող են վերջնականապես մեռցնել այդ բույսին կամ սվյալ դեպքում բամբակին:

Ցանքսաշրջանառություն կազմելիս պետք է բամբակացանն ոգնության կանչի իր շրջանում աշխատող ագրոնոմներին, վորովհետև այդ կազմելու համար կան մի շարք դժվարին տնտեսական և նույն իսկ քաղաքական բնույթ ունեցող խնդիրներ, վորոնց լուծում տալը կդժվարացնի բոլորին:

Ցանքսաշրջանառություն կազմելիս ինկատի է ունեցվում՝ լինի անհատական թե կոլտրնտեսություն—անասուններին կերով (խոտով, դարմանով) յեթե վոչ լրիվ, մասամբ ապահովելու խնդիրը, թե վոր դաշտը և նրանից վոր տոկոսը պետք է լինի ցանովի խոտերի և բամբակի տակ: Ցանքսաշրջանառությունից կախված է այդ կուլտուրաների ըստ սեզոնների լեղած աշխատավոր և վարձվելիք ձեռքերով ապահովելու խնդիրը, դաշտերի կանոնավոր և հավասարաչափ դաստ-

վորումը, բույսերի նորից կրկնելու հնարավորությունը՝ պարարտանյութերով թե այլ ձեռնարկումներով հողի բերրիությունը պահպանելու նպատակով, ջրային ռեժիմից—թե արդյոք լեղած ջրային հնարավորությունները վորքան կապահովեն կատարվելիք ցանքսերը ջրով:

Նկատի պետք է ունենալ անշուշտ հողի ֆիզիկական կազմությունը, այն է՝ փխրուն, մանրահատիկ դրությունը պահպանելու խնդիրը, վորը կախված է վորոշ տարիներից հետո խոտաբույս ցանելուց, մշակելու ձևից և այլն:

Հողի մանրահատիկ—ֆիզիկական դրությունը չափազանց կարևոր հանգամանք է. նա հնարավորություն է տալիս շուրն ազատորեն խորը թափանցելու, լինի նա անձրևներից թե ջրելուց, վորը կուտակվելով ծախսվում է բույսի կողմից և ավելորդ անսպասելի գոլորշիացում տեղի չի ունենում:

Այլապես հողի կազմության փոշիացումը ջրելու կամ անձրևների ժամանակ նպաստում է լերեսից ցեխանալուն, թույլ չի տալիս. շուրը ծծվի և առաջանում է կեղեվ, վորը խանգարում է բույսերի կանոնավոր աճմանը և խլում ավելորդ աշխատավոր ձեռքեր:

Վերջին հաշվով ցանքսաշրջանառությունը հետապնդում է մի նպատակ՝ հողը պահպանել բեր-

րի և վորքան հնարավոր ե նրանից ստանալ շատ բերք, այլապես մարդու անզիտակից և հափրշտակողական վերաբերմունքի հետևանքով կարող ե արագ ուժասպառ լինել նա:

Հայաստանի պայմաններին համապատասխանող միջանի ցանքսաշրջանառության ձևեր կարելի յե առաջարկել, վորը գլխավոր առմամբ հետապնդել ե վերև թվածս պայմանները:

Այդ սխտեմներում շատ հնչին տեղ ե տրվել հացահատիկային կուլտուրաներին, մեծ մասամբ տեղ տալով բամբակին ինկատի ունենալով նրա մշակման, տարածության ընդարձակման, վորքան կարելի յե շատ հումուլթ ստանալու քաղաքական պրորլեմը:

1. 1-ին տարին— յոնջա
 - 2-րդ » — յոնջա
 - 3 » » — բամբակ
 - 4 » » — բամբակ
 - 5 » » — բամբակ
- պարարտացումով

Այս դեպքում ամբողջ հողային տարածության 60 տոկոսը զբաղվում ե բամբակի ցանքսով և ամառվա ընթացքում ամբողջ շուրջ տրամադրվում բամբակին:

Յոնջայի ցանքսը ծառայում ե վորպես կեր

և վորոշ չափով ուժեղացնում հողը, վերականգնում նրա ֆիզիկական կազմությունը:

2. 1-ին տարին— աշնան ցորեն + յոնջա

2-րդ տարին յոնջա սոււպպերֆոսֆատի պարարտացումով:

3-րդ տարին— յոնջա

4-րդ տարին— բամբակ

5-րդ տարին— բամբակ

6-րդ տարին— բամբակ պարարտացումով

7-րդ տարին— բամբակ պարարտացումով:

Այս սխտեմի յոթգաշտյան ցանքսաշրջանառության մեջ բամբակը բռնում ե 57 տոկոսը ընդհանուր դաշտերից: Յոնջան լրիվ չափով պարարտացնում ե դաշտը և միևնույն ժամանակ ապահովում անասունների կերով և վերականգնում ե հողի ֆիզիկական կազմությունը:

Նկատված ե, վոր յոնջան 3-րդ տարին ե շատ հարստացնում հողն, այնպես վոր այս ցանքսաշրջանառությունում յոնջան 100 տոկոսով ոգտագործվում ե իր դրական հատկություններով:

3. 1. ին տարին— բամբակ

2-րդ » — բամբակ

3 » » — յոնջա

4 » » — յոնջա

5 » » — բամբակ

6 » » — բամբակ

7 » » — գարնան գարի (գոմաղբի պարարտացումով) ծրղոտավոր արմատապրառու:

Այստեղ յոնջան 2 տարի մտցվում է թե վորպես կեր և թե լավացնում հողի կազմութիւններ:

Հիշյալ ցանքաշրջանառութիւններից տեղական պայմաններին համապատասխանող սիստեմներից մեկի անցկացնելը միանգամայն կարևոր է և անհրաժեշտութիւն: Սակայն դժվարութիւններ կան անհատական տնտեսութիւնների համար, վորոնց հողերը չափազանց ցաք ու ցրիվ են, միջնակներով կտրված, անկանոն ջրային ցանցով: Իրանց հետ միասին հողերի բազմապիսի վորակը դժվարացնում է հավասարաչափ դաշտերի վերածելը և կանոնավոր մշակելը: Չեսք հիշում նաև մշակման բոլոր պրոցեսներում ավելորդ ժամանակի կորուստը դաշտից դաշտ տեղափոխելիս և մեքենայացման դժվարութիւնները:

Կոլեկտիվ տնտեսութիւնների համայնացրված խոշոր հողակտորներում մեծ հնարավորութիւններ կան հողաչափական գործիքներով կանոնավոր—հավասարաչափ դաշտերի բաժանել՝ հողաշինարարութիւն կատարել, կանոնավորել ջրային ցանցը և ոգտագործել ջրային ռեսուրսները մաքսիմալ չափով: Հեշտանում է մեքենատրակտորային կայանի տրակտորների և այլ մեքենաների աշխատեցնելը: Թվածս բոլոր առավելութիւնները հնարավորութիւն են տալիս ավելի շատ եֆֆեկտ ստանալ կոլտնտեսութիւնում, քան անհատական տնտեսութիւնում վորը և

պետք է շահագործւի վերջիններիս կախողի շաքերն անցնելու:

III. ՀՈՂԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Բույսերը, վորոնց շարքում և բամբակը, ածելու և բերք տալու համար իրենց սնունդը վերցնում են հողից և ողից:

Հողի տարբեր շերտերից արմատները վերցնում են բույսին անհրաժեշտ սննդանյութեր, վորոնք ջրի ոգնութեամբ լուծված են լինում դլուրամարս վիճակում և բարձրացնում ցողունի միջով մինչև տերւները: Այստեղ ողի, արևի ճառագայթների և տերևի խլորոֆիլ կոչված կանաչ հատիկների ոգնութեամբ վերածակվում են շաքարի, սպիտակուցի, յուղի, սւլայի և այլն: Այդ նյութերից ել գոյանում են թե ամբողջ բույսը և թե նրա պտուղները:

Իմանալու համար թե արդյոք տվյալ բույսը կամ թե մասնավորապես բամբակը ինչպիսի սննդանյութեր է վերցնում հողից, բավական է այրել այն, վորից կստացվի մոխիր, իսկ ջրային մասերը կգոլորշիանան: Ահա այդ մոխրի մեջ պարունակում են այն աղերը, վորոնց վորպես սննդանյութ վերցնում է բույսը իր արմատներով հողից:

Պարզված է, վոր 1 տոնն (60 փ.) բամբակի բերք ստանալու համար միջին հաշվով բույսն ոգտագործում է՝ ֆոսֆոր 26 կիլո, ազոտ—75,7 կիլո և կալիում—59,8 կիլո:

Իսկ յեթե այդ նույն կուլտուրան միջանի տարի իրար վրա կրկնվի նույն հողում, պարզ է հողն ուժասպառ կլինի և վերջը բոլորովին բերք չի տա:

Իրա համար ել անհրաժեշտ է հողին նորից վերադարձնել այնքան սննդանյութեր կամ աղեր, փորոնցով նա աղքատացել է վրան մշակելով ավյալ բույսը. ուրիշ խոսքով պարարտացնել հանքային կամ այլ պարարտանյութերով կամ գործադրել մշակութային այլ ձևեր, վերականգնելու հողի բերրիությունը:

1. ԳՈՄԱՂԲԸ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ

Վորպես հանրաժանութ պարարտանյութ շատ վաղուց մարդկությունը հայտնի յե գոմաղբը:

Գոմաղբը համարվում է նախ լրիվ պարարտանյութ. փորովնետե նրա մեջ պարունակվում են բույսերին անհրաժեշտ բոլոր տեսակի սնունդանյութերը և այն ել գլխավորապես վիճակում և յերկրորդ բացի հողի պարարտացնելը, լավացնում է նաև նրա ֆիզիկական կազմությունը, վորը դարձյալ հողի բերրի վիճակը նախապայմաններից մեկն է:

Ծանր կավային հողերը բերքատու դարձնելու համար հատկապես պարարտացնում են գոմաղբով, վորը փափկացնում է հողը, նպաստում ողի խորը թափանցելուն և արգելք հանդիսանում անձրևներից և ջրելուց հետո կեղևներ առաջանալուն:

Մեկ հեկտար բամբակի հող պարարտացնելու

համար անհրաժեշտ է 30—40 տոնն (2.000—2.400 փ.) կամ 100—120 սալ գոմաղբ, կրկնելով պարարտացումը 3 տարին մեկ անգամ:

Սակայն մեր բամբակագործական շրջանները չունենալով անասնապահության զարգացման համար բնական ավյալներ կրճատել են այն և միևնույն ժամանակ ավթարը գործածելով վորպես վառելանյութ, չեն ունենում մեծ քանակությամբ գոմաղբ ունեցած բոլոր հողամասերը պարարտացնելու համար:

Պակասը լրացնելու համար ոգնություն են գալիս հանքային պարարտանյութերը: Այնուամենայնիվ անհրաժեշտ է տալ համառոտ ցուցմունքներ այն մասին, թե ինչպես պահպանել և ոգտագործել գոմաղբը վորպես պարարտանյութ:

Բամբակացան գլուղացին պետք է իմանա, վոր անկանոն պահպանված և պարարտացված գոմաղբից ստացվում է շատ քիչ արդյունք, փորովնետե մինչև բույսին հասցնելը ողն են ցնդում և անձրևներից լվացվում նրա սննդատու մասը, այն է ազոտը: Այդպիսի գոմաղբով պարարտացնելն ավելի թանգ է նստում, քան արժենում է ստացված ավելցուկ բերքը:

Վորպեսզի գոմաղբը տա իրականում ոգուտ, պետք է նրան պահել այնպես, վոր նրա

203 38



մեջ մնան աննդավետ նյութերը: Դրա համար շատ կոլտնտեսություններում և խորհրդային տնտեսություններում սկսել են կառուցել հատուկ պահպանման տեղեր պատերով, ծածկոցով և այլն:

Բայց վորովհետև այդպիսի կառուցումները ծախքերի հետ են կապված և շատերին անմատչելի, ձեռնտու յե գործածել գոմաղբի պահպանման յերկու ձևերը՝ այն ե պահպանումը կույտերով և փոսերում:

Առաջին դեպքում պետք ե ընտրել հարթ և միբիչ բարձրադիր տեղ, վորպեսզի անձրևաջրերը չվողոզեն կույտը: Այստեղ կիտվում ե գոմից փոխադրված գոմաղբը և ամեն անգամ հավաարաչափ տարածելուց հետո տրորում են վոտքով, վորը շատ նպաստում ե աննդանյութերի պահպանումն ոզից: Այդպիսի կույտերում շատ արագ և հաջող ե գնում փթումը, վորը հետևանք ե բակտերիաների կամ մանրենների գործունեյության:

Յերբ այդպիսի դարսված կույտի հարստությունը հասնում ե $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$ մետր, շաղ են տալի 5—10 սանտիմետր հաստության հող և այդպես շարունակ կրկնում, մինչև հասնի բարձրությունը 2—4 մետրի, վորից հետո ծածկել դարձյալ հողաշերտով: Կույտի լայնությունը չպետք

ե լինի ավելի 2-3 մետրից, իսկ յերկարությունը կաիված ե ցանկությոնից:

Ամառվա շոգ ժամանակներն անհրաժեշտ ե հաճախակի կույտի վրա պառը ջուր շաղ տալ խոնավ պահելու նպատակով: Պետք ե կողքին փորվի նաև փոքր փոս, ուր հավաքված մեզը կամ այլ ջրալի մասերը նորից գործածել շաղ տալու համար:

Այդ ձևով լավ պահպանված գոմաղբը դաշտ փոխադրելու ժամանակ ունի կանաչ գույն, թթու հոտ, խոնավություն և միջի ծղոտային մասերը կարծեք փնակված են լինում—շատ փխրուն:

Յերկրորդ պահպանման ձևը խոր փոսեր պատրաստելն ե, վորն ավելի լավ ե պահպանում գոմաղբը: Բայց փոսն այնպես պետք ե պատրաստել, վորպեսզի անձրևաջրերով չլցվի դրա համար շրջապատել պարիսպով, կառուցել ծածկոց պաշտպանելու անձրևից, ձյունից, արեվից և քամուց, ինչպես և պահպանել ջրալի մասերը: Հատակը սալահատակել, արանքները պինդ լցնել ծանր կավահողից պատրաստած ցեխով կամ ուղղակի այդ ցեխով և լավ տրորել: Փոսը պատրաստել ուղղանկյունի, յերկար, վոչ այնքան լայն և կողերից պատերը բարձրացնել 1—1 $\frac{1}{2}$ մետր:

Նախքան գումարը լցնելը հաստակին տարածել $\frac{1}{3}$ մետր հաստութիան ծղնոտ, դարման և տրորել, վորը հետագայում կծծի հեղուկ մասերը. ամեն անգամ գումարը տարածել համաչափ և տրորել: Ժամանակ առ ժամանակ շաղ տալ օսոը ջուր կամ անասունների մեզ: Ջուրը խանգարում է բորբոսներուն, իսկ վերևից բարակ հողի շերտերն իրենց հետ կապում գազային մասերը, վորոնք գումարի արժեքավոր մասերն են:

Վերոհիշյալ ձևով պահպանված գումարը կարելի չէ կամ ձմեռը փոխադրել դաշտ—աշխատանքի ազատ ժամանակը կամ վաղ դարնան և թողնել մեծ կույտերով, ծածկելով հողով: Այդ կույտերը դաշտում համաչափ շաղ ե տրվում վարելուց առաջ: Այդպիսի պարարտացումից բերքը բարձրանում է հեկտարի վրա 20—40 փութ:

Կանգ չենք առնի մոխրի և խառնաղբի վրա, վորպես պարարտանյութերի, վորոնց մասին շատ լավ է լսել մեր գյուղացին և լավ ըմբռնել տված ոգուար:

2. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Բույսերին վորպես անունդ գործածութիան ամենաանհրաժեշտ աղերը՝ դա ֆոսֆոր և ազոտ

պարունակող աղերն են, վորոնք պատրաստվում են զավոդներում և գործածվում վորպես պարարտանյութեր. այդ աղերը սուպերֆոսֆատ և սալֆատամոնիան են:

Նրանց խառնուրդը քուսպի հետ մտել է գործածութիան մեջ 1927 թվից և այս 1931 թվականում պարարտացվում է ագրոկոմպլեքսի տակ առնվող 21.000 հեկտար բաժրակի տարածութիւնից 16.200 ը, չհաշված անցյալ տարվանից պարարտացրած 6.000 հեկտարը:

Այս թվերը ցույց են տալիս թե վորքան ոգտավետ է նրանց խառնուրդով պարարտացնելը:

Բերքատվութիան բարձրացումն ապացուցում է Հողժողկոմատի գիտահետազոտական վարչութիան կողմից դրված ֆորձադաշտերի արդյունքները, վորոնցով հնարավոր է համարվում պարարտացմամբ հասցնել միջին բերքը Եջմիածնում 9 ցենտների, Ղուրղուղուլի 12 և Հրազդան-Չանգիրասարում 20-ի:

Այդ փորձերը հետապնդում են նաև մինըպատակ, այն է՝ փորձերով հայտաբերել թե վոր շրջանի, վոր լենթաշրջանի կամ գյուղի և նույնիսկ սառնայի հողեր ինչպիսի պարարտանյութի և ինչ քանակի պարարտանյութի կարիք ունեն, վորպեսզի հետագայում կանոնավոր և

պլանաչափ մատակարարվի պարարտանյութը և հասկացվի տվյալ հողամասում բերքատուլության բարձրացման զազտնիքը:

Յեւ վորովհետև այդ վորձերը դրվում են ամբողջովին անհատ գյուղացիների և կոլտնտեսուծիյունների հողերի վրա, վորի կողքին թողնւ-վում է չպատրաստված դաշտ վորպես կանտրոլ, արդյունքն հեշտ է նկատել:

Առաջ պարարտանյութերն արտասահմանից ներմուծվելու պատճառով թանգ էր արժենում, վորը և արգելք էր հանդիսանում նրա տարածմանը: Այժմ այդ պարարտանյութերը խորհրդալին յերկրում են պատրաստվում և ավելի էժան են նստում: Այդպիսի զավոդներից մեկն էլ կառուցվում է Ղարաքիլիսայում. դա ցիանամիդի գործարանն է:

Արհեստական պարարտանյութերի խառնուրդով ամեն մի հեկտարին տրվում է 30—32 փ. և ցրվում է հողում ցանքից 1—1½ շաբաթ առաջ: Յրելուց հետո թեթև կերպով ծածկվում է հասարակ ցախե տափանով կամ զիգ-զագ փոցխով:

Ցիանամիդով պարարտացնելու դեպքում ևս ցրվում է 1—1½ շաբաթ առաջ:

Շարքացանքի դեպքում լավ է առաջուց շարքացան մեքենայով ցանել պարարտանյութը

և հետո բամբակի հունդը: Եթե ժամանակին չի ցրվել պարարտանյութը, ծայրահեղ դեպքում կարելի լի շաղ տալ բամբակի ծաղկելուց առաջ. թեև այն եֆֆեկտը չի տա ինչ առաջին դեպքում: Իրա համար պետք է հետևել ժամանակին պարարտացնելու: Պարարտանյութն ունի ներգործութիւն 2—3 տարվա ընթացքում, վորից հետո ընկնում է:

Չի խանգարի և մեծ արդյունք կտա, յեթե արհեստական պարարտանյութի հետ միասին մտցվի և գոմաղբ: Նկատված է վոր բերքն ավելի շատ է լինում: Ամենագլխավոր առավելութիւնն այն է, վոր ծանր կավային հողերը, վորոնք բնականից թեև հարուստ են սննդանյութերով, սակայն լավ բերք տալիս են միմիայն գոմաղբով պարարտացնելուց հետո, յեթ լավանում է նրա ֆիզիկական կազմութիւնը:

Այս դեպքում պետք է տալ գոմաղբ նորմայի 50 տոկոսի չափով՝ 100—120 սայլի փոխարեն 60 սայլ, իսկ պարարտանյութ նորմայի 2/3-ի չափով, ինչ տրվում է մեկ հեկտարին:

Անհրաժեշտ է պարարտացման աշխատանքները կանոնավոր անսխալ կատարելու համար միշտ խորհրդակցել շրջանային ազրոնոմի հետ, վորն ուրախությամբ կնդառաջի ձեր բոլոր առաջադրած խնդիրներին՝ կբացատրի պարարտաց-

ման ժամանակի, ձևի և նորմաների վերաբերյալ, ինկատի ունենալով հողատեսքերը:

4. ԹԻԹԵՌՆԱԾԱՂԻԿ (ԼՈՒՅՍՏԵՂ) ԲՈՒՑՍԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ՄԻՉՈՑ


Հողը հարստացնող, բերրի դարձնող միջոցներից մեկը թիթեռնածաղիկ բույսերի (յոնջա, վիկա, կորնգան, սոյա, շամբալա և այլն) մշակումն է:

Նրանք ընդունակ են հարստացնելու հողն ամենաթանգարժեք սննդանյութերից մեկով՝ ազոտով: Գիտականորեն հիմնավորված է, վոր յոնջայի մեկ հեկտարը կուտակում է հողի մեջ այնքան ազոտ, վորքան իր մեջ պարունակում է 100—200 սայլ գոմաղբը:

Գաղտնիքը նրանումն է, վոր այդ բույսերի արմատների վրա գոյացած պալարներում (ուսուցքներում) ապրում են ողից ազոտ հավաքող բակտերիաներ:

Յերբ յոնջատեղը կամ այլ պատենավոր բույսերը ցելվում են, նրանց արմատները նեխվում են և իրենց մեջ ամբարած սննդանյութերը տալիս են հողին, վորն ոգտագործվում է բամբակի կամ այլ բույսի կողմից:

Այս ձևի պարարտացում գործ էածվում մեծ մասամբ այն լեռկյուներում, ուր աղբառ են



Նկ. 1. Արմատների վրա գոյացած պալարներ, վորոնց մեջ ապրում են ողից ազոտ հավաքող բակտերիաներ:

արհեստական պարարտանյութերով. այնուամենայնիվ դա չի նշանակում, թե կարիք չկա յոնշա ցանելու. նրա գլխավոր առավելություններից մեկն էլ այն է, վոր նա վերականգնում է հողի նախկին ֆիզիկական մանրահատիկ դրուսթյունը փոշիացած վիճակից և միևնույն ժամանակ տալիս թանգարժեք սննդավետ կեր անասունների համար:

Մեծ բերք ստանալու համար կարևոր է յոնշան ևս պարարտացնել ֆոսֆոր պարունակող պարարտանյութերով, վորը համարյա կրկնապատկում է նրա բերքը:

Այդ պարարտանյութից մացվում է 1 հեկտարին $\frac{1}{4}$ -ից $\frac{1}{2}$ տոնն (15—30 փ.) շաղ տալով ցանքի յերեսից:

5. ԹԻԹԵՌՆԱԾԱՂԻԿ ԲՈՒՅՍԵՐԸ ՎՈՐՊԵՍ ԿԱՆԱԶ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Այս ձևի պարարտացման ելությունը կայանում է նրանում, վոր յերբ ցանված բույսը հասնում է իր հասունության վորոշ շրջանին, վորը ծաղկման շրջանն է, հարում են և ցելում: Հողի տակ նրա արմատները, վորի ազոտով հարուստ լինելու մասին ասվեց, և կանաչ ցողունները փտում են, կազմալուծվում և հողն ուժեղացնում սննդանյութերով:

Վորքան ցանվող բույսը խիտ լինի, այնքան կնշանակի հողը շատ ուժ կտանա: Դրա համար յեթե հատիկներ ստանալու համար պետք է ցանվի յեսթադրենք 4—6 փութ սոյա, վիկա, մաշ, լոբի և այլն, կանաչ պարարտացման համար պետք է ցանել կրկնակի՝ 8—10 փութ:

Այս ձևի պարարտացումն ամենաեժան, ձեռնտու և ճիշտ միջոցներից մեկն է, վորը պիտի լայն գործածություն ստանա բամբակացան շրջաններում:

Կանաչ պարարտացման համար հարկավոր չե մի ամբողջ տարի գաղեցնել գաշաբ: Այլ, յեսթադրենք ցանված եր այդ գաշտում ցորեն կամ գարի, հունիսին կամ հուլիսի սկզբներին արտո հնձելով անմիջապես տեղը թեթև գութաններից մեկով կամ նույնիսկ չութով վարում են (ձողտավար անում) շաղ տալիս ամենաեժան են (թողտավար անում) շաղ տալիս ամենաեժան թիթեռնածաղկի սերմերից, փոցխում, մարկոսում և շրում: Այդ շրջանում ջրի պակասություն չի դգացվում: Մինչև աշուն մի քանի անգամ ջրել և ծաղկման շրջանում հարել, մեծ գութանով հողը շուտ տալ: Այնուհետև մինչև վաղ գարուն հողի տակ կկատարվի փտում, կազմալուծում և արգեն հնարավոր կլինի բամբակ ցանել:

Այս ձևով պարարտացրած բամբակի ցանք-
սից բավականին բարձր բերք է ստացվում:

Բամբակի ցանքսից շատ բերք ստանալու և
հողը բերրի վիճակում պահելու համար յուրա-
քանչյուր բամբակացան պետք է իմանա հետե-
վյալ կարևոր ձեռնարկումների մասին.

1. Մշակել հողը կանոնավոր, մտցնել ցան-
քաաշրջանառութիւն և տեղ առ և՛ գաշտում թի-
թեռնածաղիկ բույսերին:

2. Հավաքել և խնամել գոմաղբը այն ձևով,
ինչպես նկարագրվեց, նախքան դաշտ փոխա-
դրելը:

3. Մտցնել կանաչ և արհեստական պարար-
տացում, վորը բարձրացնում է բերքատվութիւն-
ը մինչև 30 տոկոսով—2-3 տարով:

4. Սերտ կապ պահպանել տեղի ագրոնոմ-
ների հետ, վորոնք իրենց խորհուրդներով միշտ
կողմն են գյուղատնտեսական աշխատանքներում:

IV. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բամբակը շատ պահանջկոտ է դեպի տա-
քութիւնը, բայց միևնույն ժամանակ և մեծ պա-
հանջ ունի հողի կանոնավոր և խնամքով մշակե-
ման: Բամբակը սիրում է փուխը, փափուկ և
խորը հերկված հողեր, վորովհետև նրա արմատ-

ները սիրում են խորը գնալ և աղառ ձյուղա-
վորվել:

Բամբակի հողի մշակումից կախված է նրա
բերքի չափը, ինչքան էլ նա ջրով ապահովված
լինի, իր ժամանակին ջուր տանք և այլն, աչ-
նուամենայնիվ, յեթե չի հերկվել ժամանակին և
նրա մեջ չեն անցել անհրաժեշտ պրոցեսները,
հողը, ինչպես ասում են, չի հասունացել, շատ
բերք սպասել իգուր կլինի:

Այդ է պատճառը, վոր միշտ ասում են՝
բամբակ ցանելու համար նրա հողը հերկիր աշ-
նանից և այն էլ 4—5 վերջոկ խորութիւն վրա:

Աշնան հերկից շատ բան է կախված, վորն
անհրաժեշտ է թվել մեկ առ մեկ: Աշնան հեր-
կած հողը թողնում են առանց փոցխելու: Այդ
ժամանակ ամբողջ աշնան և ձմռան ընթացքում
տեղացող անձրևները, ձյունը ծծվում, ամբար-
վում են ներքնաշերտում, վորը հետագայում
բամբակի բույսին ծառայում է վորպես սնունդ:
Այդ ձևով ցելված հողերից ծծված ջուրն ալլև
չի գոլորշիանում. այնինչ պինդ հողերում թե
ջուրն է դժվար ծծվում և թե հողի միջի յեղած
խոնավութիւնն է հեշտութեամբ գոլորշիանում,
չնորհիվ նրա մեջ առաջացած մագանութների:

Հողի վրա յեղած բոլոր բուսականութիւնն
աճելու համար սնունդ է վերցնում հողից. յե-

Թե աշնանը հողը հերկելով նրանց հողի տակով ենք անում, նրանք հեշտությամբ մինչև գարուն նեխվում են և նորից վերագարձնում հողից վերցրած սնունդը: Ուրեմն աշնան հերկով բուսականությունը հողի տակով լինելով պարարտացնում է հողը:

Աշնան հերկն ազատում է գյուղացուն մոլախոտերից, վորոնք բամբակից խլում են թե սնունդը, թե խանգարում նրա կանոնավոր աճմանը և թե գոլորշիացնում բամբակից ել շատ ջուր:

Աշնան հերկով հողի տակ նեխվում են նրա ցողունները, իսկ հողը շրջելուց դուրս են մնում արմատները, վորոնք ձմեռվա ընթացքում ցրտահարվում են և ազատում դաշտը անպետք խոտերից:

Աշնան հերկով հողի յերեսն են ընկնում, ցրտահարվում, վորոնք հողի մեջ ձմեռելու նպատակով պատսպարված բոլոր տեսակի միջատային վնասատուները:

Հողի մեջ կա սննդատու պաշարի մեծ հարստություն, սակայն նա ամբողջովին մատչելի չէ բուսականությանը: Աշնան հերկով մենք հրնարավորություն ենք ստեղծում ջրի, զիշերային սառնամանիքների, տաքության և բամբակից ազդեցությամբ հողմնահարություն յենթար-

կելու հողը, վորի ժամանակ աղերը փոխվում են ավելի դյուրամարս վիճակի և բերրի դարձնում հողը:

Վերջապես պետք է համարել անխախտելի որենք ծանր կավային հողերը աշնանից հերկելը, վորի անագին մեծության կոշտերը ձմեռվա ընթացքում մինչև գարնան բացվելը փլվում են, փխրուն դառնում կլիմայի ազդեցությամբ. այլապես գարնանը ցելելով, մանավանդ յերբ մի թիչ խոնավ է, այլ կերպ շատ դժվար է հերկել առաջացած կոշտերն արևի տակ չորանալով ավելի յեն ամրանում, քար կտրու է, վորը վոչ մի գործիքով չի կարելի փշրել և խանգարում են բամբակի կամ այլ կուլտուրայի մշակմանը:

Շատ լավ ազդեցություն է ունենում գոմաղբը, յերբ աշնանից է հողի տակով արվում. մինչև գարուն նա նեխվում է և սնունդ ծառայում բամբակին առաջին տարվանից:

Վերոհիշյալ թվումներս բավական են մի ավելորդ անգամ ապացուցելու բամբակի հողի աշնանից հերկելու անհրաժեշտությունը:

Գարնանը կատարում են յերկու տեսակի հերկ: Մեկը՝ յերբ կրկնահերկում ենք աշնան վարերը, նախապատրաստում ցանքի համար, իսկ մյուսը վարում չցելված հողերը շատ վաղ գարնանը, յերբ նոր ցամաքում է նա:


Առաջին դեպքում անհրաժեշտ չե շատ խորը վարել. անգամ մեզ փաստած կլինենք, յեթե խորը վարենք, վորովհետև հողի ներքին խոնավ շերտը դուրս հանելով կգրկենք հողին նրա հարստութիւնն ներկայացող խոնավութիւննից: Յերեսանց $2\frac{1}{2}$ —3 վերշուկի խորութիւն վարն ունի նպատակ նախ վոչնչացնելու բուսած մոլախոտերը և յերկրորդ՝ փափկացնելու հողը ցանքս կատարելու համար: Դրանից հետո անհրաժեշտ է փոցխել յերկաթե փոցխով, հովասարեցնել, մարկոսել և սկսել ցանքսը:

Յերկրորդ դեպքում վաղ կատարված և այն էլ խոր վարելու նպատակն է ոգտագործել վաղ դարնան անձրևները, նախապատրաստել հողը նրանց ջրերը ամբարելու հողում և հնարավորութիւն տալ մինչև ցանքի սկսվելը հողմահարութիւն յենթարկելու հողը, վորպեսզի կոշտերը փափկանան, փլվեն և հողն ավելի բերրի դառնա:

Աշնանավարի նկատմամբ այս դեպքում ւրբիվ նպատակի չենք հասնում. սրա տարբերութիւնն այն է, վոր նախ քիչ ջուր է ամբարվում, չեն վոչնչանում հողի միջի վրասատունները և մոլախոտերը, հողի բուսական մնացորդները ժամանակին չեն փտում և հողը բերրի դարձնում. հողը քիչ է հողմահարվում և աղերը

փոխվում ավելի դյուրամարս վիճակի և վերջը ցանքն աւշացվում է, վորովհետև սպասում ենք ստիպված անձրևների կամ ջրելու:


Մեքենատրակտորային կայանների աշխատանքը հնարավորութիւնն է տալու այսուհետև հետզհետև անցնելու աշնան հերկին: Նրանց կազմակերպված պլանաչափ աշխատանքի համար




Նկ. 2. Կուլտիվատոր «Ինտերնացիոնալ Ն 3» թաթերով հողը փերացնելու համար:

անհրաժեշտ է կուլտիվատոր անտեսութիւնների համայնացրած մեծ տարածութիւն ընդգրկող հողեր, վորի համար անհրաժեշտ է աշխատավոր դյուրացիութիւն հոսանքը դեպի կոլտնտեսութիւն: Այդ դեպքում հեշտ կլինի կայանի կողմից ընդգրկելու և մեքենայացնելու բոլոր տեսակի աշխատանքները կուլտիվի համայնա-

ցրված, պլանավորված ընդարձակ հողամասերի վրա:



Նկ. 3. Յերեսավոր գոթանեւէտեմբերյան հեղափոխութեան, գործարանի, արակարային գարջով Արւայներ 133 սանտիմ.



Նկ. 4. Տրակտորային ափսեյավոր փոցի՝ 16 ափսեյով:

2. ԱՐԱԹԸ

Բամբակի աշնան աշխատանքների մեջ ե մտնում նաև ձմեռվա արաթը, վորը դարձյալ կապ ունի աշնան հերկի հետ: Արաթ անում են նաև գարնանը:

Արաթը վաղուց ծանոթ է տաք—Ղրասակավ շրջանների գյուղացիներին, ուր այդ միջոցը դործ է անվում վորպես հետագայում ջրի խիստ պահանջը մեղմացնող մի միջոց:

Այսուհետև արաթին պետք է տալ իր կարևոր տեղն ու նշանակությունը, քանի վոր տարեց-տարի բամբակի տարածությունն ընդարձակվում է զգալի տոկոսով և դրա հետ դժվարանում ջրի խնդիրը: Այստեղից ել արաթն այն միջոցն է, վորը կապահովի բամբակը ջրով և վորի տակ (արաթի) պետք է տարեց-տարի սվելի շատ տարածություններ առնվեն:

Այժմ թվենք, թե ինչ առավելություններ ունի ձմեռվա արաթը և ինչպես է կատարվում այն:

Արաթն աշնան ջրերի ազատ և վարար շրջանում (նոյեմբեր, դեկտեմբեր) մեծ քանակությամբ ջուր է ամբարում հողի ներքնաշերտում մինչև մեկ մետր խորություն՝ նայած հողի տեսակին և հատկություններին:

Այդ ամբարված խոնավութիւնը հետագայում ոգտագործվում է բամբակի բույսի կողմից: Ջրելու քանակը կրճատվում է 2 անգամ, վորով հնարավորութիւնն է տալիս յեղած ջրային ուսուրաններով ցանքսերի տարածութիւնն ընդարձակելու:

Արաթի տակ առնված հողերում վոչնչանում են ֆլասատուները, ցրտահարվում մոլախոտերի արմատները և սերմերը, վորից և քչանում է յերկու անգամ քաղհանը:

Գարնանից արագանում է բամբակի ցանքսը 10—15 որով. սերմն ընկնելով միատեսակ խոնավ հողի մեջ, բուսնում է միաժամանակ, համաչափ և հասնում ավելի շուտ:

Արաթը լավացնում է հողի ֆիզիկական կազմութիւնը և ավելի քիչ ջուր գոլորշիացնում շնորհիվ այդ հոնգամանքի, քան այլ հողերում:

Հողն ավելի բերրի յե դառնում չալթուկի հողերի նման, փտում են բուսական և կենդանական մնացորդները, հողն ազատվում, լվացվում է զանազան ֆլասատու աղերից:

Արաթի շնորհիվ ստացվում է ցանքսից համարյա կրկնակի անգամ մեծ բերք՝ 50—60 փ. փոխարեն 120—130 փութ:

3. ԻՆՉՊԵՍ Ե ԱՐՎՈՒՄ ՁՄԵՌՎԱ ԱՐԱԹԸ

Աշնանից վարվում է հողը 20—25 օանտիմետր (4—6 վերջ.) խորութեամբ գութանով կամ տրակտորով: Ծանր կավային, կավաավաղային և սևահողերում ակոսներն արվում են նեղ, իսկ ավաղային և խհային հողերում լայն: Դա նրա ավաղային և խհային հողերում լայն: Դա նրա համար է, վորովհետև ծանր հողերում ջուրն ավելի դանդաղ և դժվար է ծծվում, քան թեթև ավազոտ հողերում:

Վարելուց հետո հողը յերբեք չի կարելի փոցխել և ինչքան ակոսներում ավելի մեծ թրմբեր, կոշտեր լինեն, ավելի լավ:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներում, այսինքն աշնանացանքն ավարտելուց հետո, յերբ ջրերն ավելի վարար են և վոչ մի բույս ջրելու կարիք չի զգում, բաց են թողնում ջուրը դանդաղ և անընդհատ հոսանքով վարած հողի վրա այն հաշվով, վոր ակոսների թմբերի $\frac{1}{3}$ մասը մնա ջրից դուրս: Այս դեպքում ավելի շատ ջուր է ծծվում հողում, քան արագ հոսեցնելիս, իսկ լճացնելու դեպքում հողը կեղև կկապի: Ջրել պետք է 3—5 որ, նայած հողի տեսքին:

Ակոսի թմբերը ջուր ծծելով փերվում-թափվում են հետագայում ակոսները և այլևս առիթ է լինում կեղև կապելու. իսկ հողի յերեսի փըխ-

բուն հողը թույլ չի տալիս ամբարված խոնավութիւնը նորից գոլորշիանալու:

Այս դրութեամբ հողը մտում է մինչև գարուն:

Վաղ գարնանը յերևում են արաթ արած հողի վրա մնացորդ մոլախոտերի ծիլերը, վորը վոչնչացվում է բազմախոփանի գութանով 6—8 սանտիմետր խորութեամբ կրկնավար կատարելով: Դրանից խոր վարել չի կարելի, վորովհետև խորը վարելով հողի խոնավներքևի շերտը դուրս կհանենք և կցամաքեցնենք ավելորդ գոլորշիացումով: Այս դեպքում մեր նպատակին հասած չենք լինի:

Կրկնավարից հետո հողը թեթև փոցխվում է և ցանվում շարքացանով:

Այսպիսի հողում սերմերը հավասար խոնավութիւն ստանալով բսնում են համաչափ և միատամանակ և ջրելու յել կարիք չի լինում յերկար ժամանակ, շատ հասկանալի պատճառով: Իսկ չջրելով հողը, չի կեղևակալի և ավելորդ աշխատանք չի պահանջի. չեն յերևում մոլախոտերը, վորոնք իզուր բավականաչափ ջուր են գոլորշիացնում և խանդարում բամբակի կանոնավոր աճմանը, դրանից յեղնելով կրճատվում է քաղհանի քանակը և ավելորդ ծախսերը:

Արվում է նաև գարնան արաթ, սակայն

գարնան արաթն այն սգուար չի տալիս, ինչ աշնանը:

Գարնան արաթի վարն արվում է աշնանից և թողնվում մինչև գարուն. գարնանը նորից վարվում է 3—4 վերջոկ խորութեամբ և իսկույն ջրվում այն ձևով, ինչպես նկարագրվեց վերելում: Յերբ հողը ցամաքում է, փոցխում են և ցանում:

Սրա առավելութիւնը միակ այն է, վոր ամբարելով խոնավութիւն, խնայում ենք մի ջուր և մասամբ վոչնչացնում մոլախոտերը և բարձրացնում բերքը:

Նկարագրելով արաթը և թվելով նրա ոգուտները, մանավանդ ձմեռվա արաթի, բամբակացան կոլլեկտիվ տնտեսութիւնները և անհատ գյուղացիները պետք է մեծ ուշադրութիւն դարձնեն նրա վրա: Հողերի մեծ մասն առնելով արաթի տակ, նրանք հետագայում կհնչուացնեն թե բամբակի խնամքը և թե կատանան ըզգալի բերք:

Իսկ աշնան հերկը կոլտնտեսութիւնների կողմից վորպես մի կազմակերպված ուժեղ միավորի, հարուստ համայնացրված արտադրական միջոցներով ավելի դյուրին է անցկացնել բան չքավոր և միջակ տնտեսութիւնները, վո-

բոնք առանձին-առանձին միշտ ել զուբկ կլինեն
այդ հնարավորություններից:

V. ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԸ

Յերբ արդեն հողը կրկնահերկ ե արված,
պարարտացված, փոցխված-փխրեցրած, հետո ար-
դեն կարելի յե անցնել բամբակի ցանելուն:

Յերբ բամբակի ցանքը կատարվում ե ժա-
մանակին և այն ել վերը թված կարգով ու հո-
ղը պատրաստված խնամքով, այն ժամանակ ցա-
նածը միահամուռ կծլի, բույսը կզարգանա կա-
նոնավոր և կուժեղանա Ֆիզիկապես դիմադրե-
լու բոլոր տեսակի պատահարներին ու հիվան-
դություններին:

Բամբակը ցանելու համար շատ տաքություն
ե հարկավոր. շուտ ցանելով վտանգ կա ցրտա-
հարելու: Յուրտ հողում յերկար ժամանակ սեր-
մերը ծլում-փտում են կամ ծլելու դեպքում
ցրտահարվում: Հակառակ դեպքում կենդանի մը-
նացած ծիլերը շատ թույլ են լինում, վորովհե-
տե արևի ճառագայթներն այնքան ուժ չեն ու-
նենում հողը տաքացնելու, վորպեսզի շուտուղ-
ղվեն, ուժի դան բույսերը և զարգանան կանո-
նավոր:

Ուշ ցանենն ել դարձյալ բացասական հե-

տեանքներ ե ունենում: Նախ վրա յեն հասնում
աշնան ցրտերը, կնգուղները լիովին չեն բաց-
վում, բույսը ցրտահարվում ե դրանից ել քիչ ե
բերք ստացվում և յերկրորդ՝ վորակով ել վատ
բամբակ:

Բամբակացանն այս բոլորը պետք ե հաշվի
առնի և այնպես դասավորի, վոր բամբակն իր
ժամանակին ցանվի: Իրա համար պետք ե հաշ-
վի առնել տեղական կլիմայական և հողային
պայմանները և յեխելով սեփական փորձից, հար-
ժարեցնել ցանքի ժամանակը:

Առհասարակ թեթև և դյուրնեյ սևահողերում
վորոնք ավելի լավ են տաքություն պահում, կա-
րելի յե մի քանի որով ցանքը շուտ կատարել,
իսկ ծանր կավային և դազեյ հողերում ցանքը
չվտանգելու համար՝ ուշ:

Մեր՝ Հայաստանի պայմաններում լավ ե մի-
ջին հաշվով բամբակի ցանքն սկսել մոտավո-
րապես ապրիլի 15-ից. այդ ժամանակ հողի տա-
քությունը ամենաքիչը 15 աստիճան ե լինում
և միջանի որից անգամ տեղ-տեղ հասնում 20—
25 աստիճանի:

Բացի բամբակի ցանքի ժամանակի ճիշտ
վորոշելը, վորն ունի կարևոր նշանակություն և
վորոշում ե ստացվելիք բերքի չափը, խոշոր նը-
շանակություն ունի նաև թե ինչպես և ինչպի-

սի սերմ կցանենք, վորից և կախված է հետագա խնամքը, իսկ դրանից ել աարվա վերջի արդյունքները:

Ընդհանրապես ցանքից առաջ սերմերը թրջում են, վորպեսզի բավականաչափ խոնավություն վերցնեն իրենց մեջ և շուտ ծլեն: Սերմերը թրջում են հոսող առվի միջակ տաքության ջրի մեջ առարակներով և թողնում մի յերկու օր:

Ջրից հանելուց հետո սերմերը չպետք է թողնել տոպրակի մեջ, այլապես տաքանալուց կարող են ծլել ցանկացածից ավելի, վորը ցանելու ժամանակ կկտրատվեն և այլևս չեն բուսնի:

Կանոնավոր թրջված սերմերը պետք է մի-միայն ուռչեն և հաղիվ սպիտակ կետի նման բողբոջներ արձակեն, իսկ մատներով հուպ տալու ժամանակ սպիտակ միջուկը դուրս պրծնի:

Անհրաժեշտ է այդպիսի սերմեր ցանելուց առաջ խառնել մոխրի, ավազի կամ չոր հողի հետ և տրորել, վորպեսզի վրայի թելերով սերմերը իրար չկպչեն, ցանելիս հեշտությամբ իրարից անջատվեն, մեքենան համաչափ ցանի, հատ-հատ ընկնեն հողի մեջ:

Սերմերի ցանելու խորութունն ունի խորը նշանակություն: Այսպես տարբեր խորու-

թյան վրա ցանված սերմերը տալիս են հետևյալ ծիլունակութունը.

2,25 սանտ. ծիլունակ. հասնում է	60 — 65 տ.
4,5 » » »	57 տ.
7,2 » » »	55 տ.
9 » » »	11,5 տ.
15,75 » » »	1 տ.
18 » » »	0 տ.

Այսպիսով ցանկալի խորութուն պետք է համարել 4,5—6,8 սանտ.: Յերես ցանելը վրտանգավոր է՝ նա կարող է շատ ցամաքեցնել սերմը, մանավանդ տաք և չորալին լեղանակներին:

Միայն շարքացանն ավելացնում է բերքը միջին հաշվով մինչև 10 տոկ. (յերբեմն մինչև 30 տոկ.) ընդդեմ շղացանի:

Սերմ ցանելու միջանի լեղանակներ կան, սակայն Արարատյան գաշտի բամբակացաններին հայտնի յեն շղացան և շարքացան ձևերը:

Շղացանը. Բամբակի ցանքի վաղուց ծանոթ և չկատարելագործված ձևն է, վորն ունի շատ թերի կողմեր:

Յերը հողն արդեն պատրաստ է լինում, այսինքն կրկնավարից և ցաքանելուց հետո կապում են մարգեր մարկոսելով, վորից հետո կա-

տարուամ շաղացան և տափանում (մանգյառում) սերմերը տակ անելու նպատակով: Այս աշխատանքների վրա ավելորդ է կանգ առնել, քանի վոր ամեն մի գյուղացու ծանոթ է:

Հարկավոր է միմիայն հիշել այն, վոր մարգեր կապելու համար պետք է ի նկատի սունենալ, վոր յերկար մարգերն անհամաչափ են ջրում բոլոր մասերը, վորից անհամաչափ էլ զարգանում է բույսը: Պետք է մարգերը շատ թեք չը լինեն, վորպեսզի ջուրը մեծ հոսանքով չգնա, այլապես թե վատ կջրվի և թե հողի բերքի մասը կըջի ջուրը կտանի մի տեղ կկուտակի հաստ շերտով, վորի տակից դժվար դուրս կգան ծիլերը, ինչպես և հողը քանդելով սերմերը կըջվեն: Հիշել նաև այն թերությունները, վորոնք առաջանում են շաղացանից:

Շաղացան կատարելիս սերմ ավելի շատ է գնում 2-3 անգամ, քան շարքացանի ժամանակ, սերմերը հավասար խորության վրա չեն ընկնում, վորից և համաչափ չեն բսնում: Շատ սերմեր անգամ այնքան են խորն ընկնում, վոր դժվար են դուրս գալի հողի յերես, կամ մի տեղ շատ սերմ է ընկնում, իսկ մյուս տեղը սեյրակ է մնում: Հետագա խնամքը շատ դժվարանում է, ավելի շատ բանվորական ձեռքեր են պահանջվում քաղհանի և բժշկության համար, քան շար-

քացանի ժամանակ և զգալիորեն թանգացնում բամբակի ինքնարժեքը, ինչնում գուտ յեկամուտը:

Շատ դժվար է փխրեցնելը և քաղհանելը ուրագներով (թաքուջակներով), վորը շատ կարևոր է անձրեմներից և ջրելուց հետո կեղև տալը և բացի այդ անագին ժամանակ է խլում, այն ինչ դաշտը կարող է մոլախոտերի մեջ կորչել, մանավանդ վոր ամեն մի որը մեծ նշանակություն ունի, վորովհետև մոլախոտերն ամեն մի որ անագին ջուր են խլում բամբակից և գոլորչիացնում, վորի պակասը կարող է վճռական ազդեցություն ունենալ բերքի վրա:

Շաղացանի դեպքում բամբակացան գյուղացիք գործ են ածում տափան կամ մանգյառ կոչված գործիքը, վորն անագին ոգուտ է տալիս, սակայն նա էլ պիտանի է միմիայն բամբակի սակման սկզբնական շրջանում: Բամբակի ցանքման հետո ջրելուց հողը կեղև է կապում. տափանը մարգի միջով անց կենալով, ջարդում է կեղևը, փխրեցնում հողը, նպաստում ծիլերի շուտ զարգանալուն և առնում ջրի գոլորչիացման առաջը:

Շաղացանի դեպքում գյուղացին բացի տափանը, մարկոսը և թաքուջագը ուրիշ վոչ մի գործիքով չի աշխատում. այստեղից բույսի մը-


շակումը չը մեքենայոյցներով պահանջում ե շատ բանվորական ձեռք, ինչպես ասում են ամեն ինչ անում են ջանի զոռով, վորից և ծախքն ե շատ լինում — գուտ լեկամուտը քիչ և անգամ մնասվում, մանավանդ վոր շատ հաճախ չնչին բերք են ստանում:

Շարձացանք ցանքի ամենալավ և նպատակահարմար ձևն ե, վորը կատարվում ե հատուկ շարքացան մեքենաներով:

Շարքացան մեքենաները մի քանի տեսակ են լինում՝ մի շարքանի, լերկշարքանի, լերեքշարքանի և զանազան գավոզների արտադրութիւն, զանազան նարմարութիւններով:

Այս վերջի տարիները շարքացանքը այնքան ե տարածված, վոր համարյա բոլոր գյուղացիք ծանոթ են նրանց գործածութիւնը, սակայն պետք ե ասել, վոր շարքացանների մեջ պետք ե ուշադրութեան արժանացնել «Ռեկորդ» մարկայի խորհրդային արտադրութեան շարքացաններին, վորոնք թե ունեն մեծ հարմարութիւններ և թե տարեց տարի կատարելագործվելով արդեն դադարեցվել ե արտասահմանյան «Եվեր» և այլ մարկաների ներմուծումը:

Շարքացանքն ունի մի շարք առավելութիւններ, վորի համար անհրաժեշտ ե մոտ ապագայում բամբակի ամբողջ տարածութիւնը 100 տոկոսով կատարել շարքացանք:



Նկ. 5. Մի շարքանի բամբակի ցանող մեքենա «Ռեկորդ» մարկայի:

Շարքացանի դեպքում մեկ հեկտարի վրա գնում ե 32—48 կիլո բամբակի հունդ. սերմի քանակը կախված ե հողից՝ ամուր անմշակ հողերում մոտ 48 կիլո (3 փ.), իսկ Հրազդանի, Ջանգիբասարի և Դուրգուղուլու նման փափուկ, մշակված հողերում ավելի պակաս. ի նկատի յե ունեցվում նաև շարքացանների պակասութիւնը:

Շարքացան մեքենան որեկան հեշտութեամբ կարող ե ցանել մինչև մեկ և կես հեկտար տաբածութիւն և պահանջում ե մեկ տղամարդ, մեկ պատանի և մեկ ձի:

Անհրաժեշտ ե ցանքսի սկսվելուց առաջ խորհրդակցել գյուղատնտեսի հետ, վորը կտա մանրամասը բացատրութիւն թե գլուղի վոր հողե-

րում, ինչ քանակութիամբ սերմ պետք է ցանվի, ինչ խորութիամբ և անգամ կծանոթացնի շարքացան մեքենայի գործածութիան հետ:

Շարքերի միջի տարածությունը, ինչպես և բույսերի իրարից հեռավորությունը կախված է հողի ուժեղությունից: Վորքան հողն ուժեղ լինի, այնքան բույսերի տարածությունը պետք է ավելի վերցնել, վորովհետև այդպիսի հողերում ստացվում են ուժեղ և փարթամ աճած թփեր: Խիտ ցանելու դեպքում թփերը իրար շվաք կանեն, վորից դրզված վեր կբարձրանա, վորովհետև նրանք լույսի մեծ կարիք ունեն, բույսի վերի մասը միմիայն լույ կտա, դրա հետևանքով էլ բերքը քիչ կլինի:

Ուժասպառ լեղած կավային հողերում շարքը շարքից պետք է ավելի տալ, իսկ, բույսերի հեռավորությունն իրարից պակաս:

Այդ հիմամբ Հրազդանի, Զանգիբասարի և Ղուրղուղուլու հողերում շարքը շարքից տալ 30—45 սանտ. (7—10 վերշ.), բույսերի հեռավորությունը շարքերում մինչև 3/4 մետր (մեկ արշինից քիչ ավել):

Իսկ Յերևանի և Եջմիածնի հողերում, վորպես համեմատաբար ուժասպառ լեղած հողեր շարքերը 55—65 տանտ., բույսերի հեռավորությունը 30—40 ս. (6—8 վերշոկ):

Շարքացանի դեպքում սերմերը համաչափ, հավասար հեռավորութիան և խորութիան վրա են ընկնում: Սերմերի ցանելու խորությունը կախված է մեր ցանկությունից: Հավասար խորութիան վրա ընկնելով միաժամանակ և միահավասար ծիլեր են արձակում: Յերք ժամանակին նոսրացվում է նրանք իրար չեն խանգարում՝ աճում են նորմալ և հասունանում միաժամանակ:

Քաղհանելը և փխրեցնելը կատարվում է մեքենայով, շատ հեշտութիամբ, արագ, շատ եժան և ժամանակին:

Որինակ մեկ հեկտար բամբակը մշակելու համար հարկավոր է.

Շաղացանի դեպքում

Ցանելը, փոցխելը . . .	1 բանվ. 2 ձի.
Բամբակի նոսրացումը . . .	5 » —
Քաղհանելը 4 անգամ . . .	50 » —
<hr/>	
Ընդամենը . . .	56 բանվ. 2 ձիու ոք

Շարքացանի դեպքում

Ցանքը շարքացանով . . .	1 բանվ. 1 պատ. 1 ձի
Նոսրացումը . . .	5 » — —
Միջշարքերի փխրեցնելը . . .	3 » 3 » 3 »
3 անգամ . . .	3 » — —
Քաղհանը 4 անգամ . . .	20 » — —
<hr/>	
Ընդամենը՝ . . .	29 բանվ. 4 պատ. 4 ձիու ոք

Ընդամենը՝ 29 բանվ. 4 պատ. 4 ձիու ոք աշխատանք:

Այստեղից պարզ յերևում է շարքացանք կատարելու առավելութիւնը, ուր աշխատավոր ձեռքերի տարբերութիւնը 27 է, վորը զգալի թիվ է, յեթե ընդունենք, վոր հաճախ ամեն մի տնտեսութիւնն յշակում է մի քանի հեկտար բամբակ:

Շարքացանքի դեպքում շատ հեշտ է լինում վնասատուների դեմ պայքար մղելը՝ դեղորայք սրսկելը, ծծմբով փոշոտելը և այլն և վերջապես ավելի շատ բերք է ստացվում քան շարքացանի դեպքում:

Այս բոլոր առավելութիւնները բավական են, վոր ամեն մի գյուղացի հետապնդելով իր շահերը մտնի կոլլեկտիվ կամ հետեի կոլտնտեսութիւնների որինակին, ինքն ել ցանի շարքացան, լրիվ բեռնվածութիւնով աշխատեցնի շարքացան մեքենան: Այս ձեռնարկութիւններից կողովեն թե իրենք և թե կառավարութիւնը, ապահովելով մանածագործարանները բամբակով:

V. ԲԱՄԲԱԿԻ ԽՆԱՄՔԸ

Առհասարակ բույսերի և նրանց թվում բամբակի կանոնավոր զարգացման և առատ բերք ստանալու համար անհրաժեշտ է՝ արևի լույս՝ ազատ տարածութիւն, բերքի ուժեղ հող, հողում անհրաժեշտ քանակութիւն բոնավութիւն

և ժամանակին պայքար միջատային վնասատուների դեմ:

Ահա այս բոլոր նպատավոր պայմանների ստեղծելը կոչվում է բամբակի խնամք, վորի նկարագրութիւնը և անցնում ենք այժմ:

1. ԲԱՄԲԱԿԻ ՆՈՍՐԱՑՆԵԼԸ

Բամբակը սիրում է, յերբ այնքան նոսր է լինում վոր ազատ աճում է, իրար շվաք չեն անում, հավասարաչափ ստանում են լույս, ոդ, հողից ջուր, աննդանյութեր և այլն:

Այդ պայմանները ստեղծելու համար բամբակացանի առաջին աշխատանքը պետք է լինի նոսրացում կատարելը:

Յերբ բամբակի բույսի վրա յերևում են առաջին տերմները, անպայմանորեն պետք է կատարել նոսրացում: Դա մոտավորապես բամբակի դուրս գալուց—ծիլերի յերևալուց 10—14-րդ օրն է:

Բամբակը սկզբնական շրջանում աճում է շատ արագ և իրեն զարգանալու համար պահանջում է ազատ տարածութիւն. հակառակ պարագայում սկսում են իրար շվաք անել, իսկ ուշ նոսրացնելու դեպքում բույսը իր ամբողջ ուժը տալիս է բարձրանալուն, համեմատաբար թույլ է լինում, այնքան վոր քամիներից կարօք է

Քննազեկ և հողին իզուր տեղը ուժասպառ ե լինում սնելով ավելի շատ բույս, վորի մի մասը հետագայում պետք ե հանվի նոսրացնելու նըպատակով և մի կողմը գցվի: Հետագա նոսրացվելիք բույսերն իզուր տեղն ջուր են ծախսում, վորն այնքան կարևոր ե, վորից և բերքատվութիւնն իջնում ե մոտավորապէս 20—25% -ով:

Այդ նպատակով բամբակի նոսրացումը պետք ե կատարել ժամանակին և այն ել 3 անգամ:

Առաջին նոսրացումը պետք ե կատարել յերկու իսկական տերևների յերևալու ժամանակաշրջանում, իսկ յերկրորդը, յերբ առաջ են գալիս 3—4 տերմները, ինչպէս ասում են ստուգման նոսրացումը ցանքսից 25—35 որ հետո:

Միանգամից նոսրացում կատարելը վտանգավոր ե, վորովհետև սկզբնական շրջանում բամբակի թշնամիները շատ շատ են, վորոնք կարող են շատ բույսեր փչացնել և յեթե առաջուց ել մենք նոսրացրած լինենք միանգամից, այն ժամանակ դաշտում շատ քիչ բույս կմնա: Իսկ յեթե յերկու անգամ ենք կատարում նոսրացումն այն ժամանակ այդպիսի դեպքերում մնացած են լինում փոխարինող բույսերն:

Առաջին նոսրացումը լավ ե կատարել, յերբ բույսը բավական ուժեղացած ե լինում, այսինքն առաջին յերկու տերևների զարգանալուց հետո:

Բույսերի իրարից հեռավորութիւն չափի մասին ասվեց ցանքի ժամանակ, վորը լիովին կախված ե տեղի և կլիմայական—հողային պայմաններից, ավելի լավ ե այդ խնդրում յեջնել տեղական փորձից, իմանալով հետևյալը, վոր վորքան շատ տարածութիւն թողնենք, այնքան ել բամբակի թուփը փարթամ կաճի, մանավանդ ուժեղ հողերում, շատ կնգուղ կտա, սակայն նըրանց զարգացման շրջանն ավելի յերկար կլինի ինչպէս ասում են վիգիտացիան յերկար կտեի, ցրտերը վրա կհասնեն կնգուղները չեն բացվիլ և վերջին հաշվով բերք քիչ կստանանք: Ինչքան բույսը տեղի պայմաններից յեջնելով նորմալ հեռավորութիւն ունենա, այնքան համեմատաբար թփերը փոքր կը լինեն, կնգուղ քիչ կլինի, սակայն միաժամանակ կը բացվեն և բերք շատ կլինի:

2. ՀՈՂԻ ՓԽՐԵՑՆԵԼԸ ՅԵՎ ՄՈՂԱՅՈՑԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

Բամբակի բույսին անհրաժեշտ ե ջուր և ոդ, վորպեսզի արմատները կանոնավոր սնեն բույսին: Իրա համար հարկավոր ե հողը պահել այսպիսի վիճակում, վորպեսզի միշտ լինի թե խոնավութիւն—ջուր սննդատու աղերը լուծելու, դուրամարս դարձնելու համար և թե ոդ, վորը

գարձյալ կարևոր և արմատի նորմալ աճեցողության և նրա գործունեություն համար:

Փորձված է, վոր հողի մեջ շատ խոնավություն կարելի լի պահպանել միայն այն ժամանակ, յերբ հողի յերեսը պահում ենք փխրուն վիճակում և դա շատ պարզ և հասկանալի պատճառով:


Յեթե հողի յերեսը փափկացրված է, մանավանդ ծանր կավային հողերի, այն դեպքում ջրերի և անձրևների ժամանակ ամբողջ ջուրը հեշտությունը կծծվի հողի ներքին շերտերը և այնտեղից կոպտագործվի բույսերի արմատների կողմից: Այնտեղից ավելորդ գոլորշիացում տեղի չի ունենալ, վորովհետև հողի փխրուն վերնաշերտը պահպանում է արևի ճառագայթներից ներքևի շերտը և փխրացնելով արդեն խանգարած ենք լինում այն մազանոթների կարգը, վորոնցով պնդացած — կեղև կազմած հողերում վեր է բարձրանում ջուրը և գոլորշիանում:

Ամերիկայում կան չորային շրջաններ, ուր մեծ բերք են ստանում, վորովհետև խիստ հետևվում են մշակութային և խնամքի այդ ձևին: Սրկասած աշնանից մշակութային ամբողջ շրջանում միշտ հողը փխրեցնում են, մոլախոտերը վոչընչացնում, վորով ստեղծված բոլոր ջրային հնա-

րավորությունները տալիս մշակվող կուլտուրային ոգտագործելու:

Փխրեցրած հողերում ողը հեշտությամբ է թափանցում, վորը նպաստում և բուսական և կենդանական մնացորդների նեխման և զանազան քիմիական պրոցեսների, վորով հողը պարարտանում է, բերրի դառնում:

Այստեղից յեզրակացություն, վոր բամբակի հողի յերեսը միշտ պետք է փխրեցնել և այն ել ջրերուց հետո, յերբ հողերը, մանավանդ կավային հողերը կեղև են կազմում:




Նկ. 6. Հողի մակերևույթի կեղևը:

Յանքից հետո, անգամ բամբակի բույսուց ել առաջ հողը ծածկվում է զանազան մոլախոտերով, վորոնք հողից վերցնում են սննդանյութ-


թեր և ոգտագործում—գոլորշիացնում ավելի շատ ջուր, քան բամբակի բույսը: Բացի այդ նրանք շվաք են անում, զի կում արևի ճառագայթներից բամբակին: Այսպիսի պայմաններում պարզ է բամբակը չի աճիլ. դրա համար հարկավոր է վոչնչացնել մուլախոտերին:

Այդ նպատակին ևս կարելի է հասնել այն ժամանակ, յերբ հողը հաճախակի փխրեցնեն ձեռքի կամ ձիու քաղհանիչ—պլանետ կամ կուլտիվատոր կոչված գործիքով: Սակայն այս գործիքները գործ են ածվում միմիայն շարքացանքի դեպքում և բավականին աշխատավոր ձեռքեր և ժամանակ է խնայվում:




Նկ. 7. Ձեռքի «Պլանետ» կուլտիվատորը փխրացնելու և քաղհանի թաթերով (քաղհանի շանակներով):

Ավելի լավ միջոցը մուլախոտերի վոչնչացման համար պետք է համարել աշնան խոր հեր-




Նկ. 8. Ձեռքի կուլտիվատորներ «Պլանետ», նոր կոնստրուկցիայի, թաթերով:



Նկ. 9. կուլտիվատոր «Պլանետ» բամբակի միջաբային հերկի համար:

կը, վորի դեպքում ամառը պայքարելը ավելի հեշտանում է:



Նկ. 10. Ձիան կուլտիվատոր «Պլանետ» սխեմայի, հինգ թափանի, պահեստի մասերով և տուն ու խորուխյունը կարգավորող ձողերով:

Մեզ մոտ ըստ տեղական սովորության այդ աշխատանքը, այսինքն փխրեցնելը և մուլախոտերի քաղհանը կատարում են ձեռքի հողուրագներով կամ թաքուշագներով վորով աշխատանքը դանդաղ և առաջ գնում և մեկ հեկտարի վրա պահանջում 20—30 բանվոր, այն ինչ ձեռքի պլանետով մեկ հեկտարի վրա բավական և մեկ բանվոր 2 ուր, իսկ ձիու կուլտիվատորով 1 ուր և հաճախ ել ավելի քիչ:

Այս աշխատանքների ժամանակ պետք է լինել շատ զգույշ, վորպեսզի չվնասվեն բամբակի արմատները: Մեզ մոտ առաջին քաղհանը հարմարեցնում են առաջին նոսրացմանը և կատարում են ձեռքի կուլտիվատորներով:

Հետագայում աշխատում են ձիու կուլտիվատորներով մինչև 4 անգամ ամեն ուժեղ անձրեփներից, ջրելուց և մուլախոտերով ծածկվելուց հետո: Փխրեցումը 6—8 սանտիմետր խորությունից ավել չպետք է կատարել, այլապես կվնասվեն արմատները:

Ամեն մի կուլտիվացիան ավելացնում է բերքը 10 տոկոսով, իսկ ընդհանուր առմամբ խնայում 2 ջուր:

Առհասարակ հուլիսի վերջերին մուլախոտերն այնքան ել վտանգ չեն ներկայացնում իրենցից, վորովհետև բամբակն արդեն բավականաչափ բարձրանում է և հեշտությամբ խեղդում մուլախոտերին:

Մինչև հիմա հատուկ բեկատու կուլտիվատորներով բամբակին բուռի ենք տալիս յեղել, սակայն գտնվել է, վոր դա ավելորդ աշխատանք է, անգամ վնաս, վորովհետև այդ աշխատանքի ժամանակ իզուր խոնավություն է կորչում:

Վորոշ շրջաններում սովորություն է նաև ծաղկման շրջանում բամբակի բույսի գլուխը տալով իբր թե արագացնել նրա հասունանալը, կրնգողներին բացվելը: Բայց շատ ժամանակ այդ աշխատանքը կամ բացասական հետևանք է տալիս կամ ապարդյուն անցնում բանվորական ձեռքերի վրա դրված ծախքը:

Բանը նրանումն է, վոր վաղ կատարված այդ աշխատանքը անգամ իջեցնում է բերքը, վորովհետև տալիս է վոչ պտղատու ճյուղերի ճյուղավորում փոխանակ պտղատու ճյուղերի, իսկ ուշ կատարվածները զգալի ոգուտ չեն տալիս և չեն ծածկում ծախքը:

Դրական արդյունք տալիս է միմիայն ծաղկելուց առաջ կատարված վերոհիշյալ աշխատանքը, վորը սակայն կախված է բամբակի տեսակից, հողի բերրիությունից, ջրելու կարգից և ժամանակից: Այդ բոլոր մոմենտների հաշվի առնելը դժվար լինելու պատճառով, ընդհանուր առմամբ խորհուրդ է տրվում այդ ավելորդ աշխատանքը կատարել:

3. ԲԱՄԲԱԿԻ ԶՐԵԼԸ ՅԵՎ ԶՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Բամբակի կուլտուրայի տարածության ընդարձակման, ինչպես և բերքատվության բարձրացման գլխավոր գործոններից մեկը ջրի խընդիրն է:

Իր աճման զանազան շրջաններում բամբակը պահանջում է տարբեր քանակության ջուր, մանավանդ ջուր հարկավոր է նրան առաջին շրջանում, յերբ բույսը դարգանում է և ծաղկման ու կնգողներ կազմելու շրջանում:

Շատ քիչ դեպքերում միմիայն կարող է պա-

տահել, վոր տեղացող անձրևները բավարարեն բամբակի պահանջները իր ժամանակին կամ կանոնավոր խնամքով հնարավոր լինի ամբարել հողում խոնավություն բամբակի ջրի պահանջը լրացնելու համար:

Արարատյան դաշտավայրի բամբակացանությունը հիմնված է զուտ արհեստական վոռոգման վրա: Սակայն ջրի պակասությունը, տարեց տարի ընդարձակվող բամբակի տարածության բավարարելը մեր ընդհանուր կարևոր խնդիրներից է, վոր ջուրը ընդհանուր պետական հարըստություն է, վորի ծախսելը պետք է լինի խնայողաբար և խելացիորեն:

Ջուրն այն հզոր միջոցն է, վորով բամբակացանը կարող է դեկավարել բույսի ընդհանուր զարգացումը և նրանից սպասվելիք բերքը: Դրա համար էլ ջուր տալով բույսին վոչ միայն լուծում ենք բույսերի պահանջը դեպի այն, այլ և ջրի միջոցով կարգավորում բույսերի հողից սնունդ ստանալու խնդիրը և նրանով բերքն ու հասունանալու շրջանը:

Ինչպես ջրապակասությունն, այնպես է, ավելորդ ջուրը ծաղկման շրջանում առաջ է բերում պտուղի պակաս առաջացում: Ծաղկման շրջանը զուգադիպում է կլիմայական այն շրջանին, յերբ ջերմության աստիճանն ավելի բար-

ձրը ե լինում ողում, բույսերն ավելի շատ ջուր են գոլորշիացնում. սակայն և ավելորդ ջուրը յերկարացնում ե բույսի զարգացումը, ուշացնում հասունանալը և իջեցնում բերքի քանակը:

Ջրի ծախսումը կախված ե՝

1. Ջրելու ձևից և ժամանակից.

2. Դաշտը ջրելու համար նախապատրաստելուց.

3. Ջրելուց հետո հողի վրա տարվելիք խընամքից և առհասարակ բույսերի խնամքից և

4. Չմեծվա և դարնան արաթից:

Մեզ մոտ ջրում են մարգերով, սակայն ինչպես հիշվեց գլուխներից մեկում, յերկար մարգերն ավելի շատ ջուր են տանում, ուշ ծայր հասնում, թեք մարգերում ջրի հոսանքն ավելի ուժեղ ե լինում, ջուր քիչ ե ծծվում և բացի այդ հողի վերին բերրի որգանական մասը քշվում ե ջրով և այլն:

Պետք ե իմանալ, վոր ավելորդ ջրելը փաստում ե անգամ ցանքսին և իզուր ծախսվում ջուր:

Ջրելու համար պետք ե նախորոք դաշտը մարգերի վերածել, պատրաստել ջրատար առունները, վորպեսզի ավելորդ ջուր չկորչի, լճանա և այլն: Գլխավոր ջրանցքները մաքրել մոլախտաբերից և առհասարակ վերանորոգել, վորպեսզի

ջրի հոսանքը զանդադեցնող արգելառիթներ չը լինեն: Դրա համար հարկավոր ե գյուղհասարակութանը և կոլտնտեսութանը միասին կազմակերպվել և դաշտ դուրս գալ նախ քան ջրելու ժամանակը կատարելու վերոհիշյալ աշխատանքները:

Դաշտը ջրելը պետք ե լինի պլանաչափ և կազմակերպված, վորպեսզի ըստ կարիքի սկսվի ջրվել նախ գյուղի մի կողմի սառնան, հետո մյուսը: Յեթե մի քանի անգամ ջուրը գյուղի ներքի սառնալից վերի սառնան փոխադրվի, այն ժամանակ ավելորդ ժամանակի և ջրի կորուստ կպատճառի, վորը բոլորովին ցանկալի չե:

Այդ ե պատճառը, վոր կոլտնտեսութան համայնեցրված ընդարձակ հողամասը ջրելու համար ավելի քիչ ժամանակ և ջուր ե պահանջվում, քան անհատական տնտեսութունների հատ ու կտոր անկանոն դասավորված հողակտորներում:

Անհրաժեշտ ե լայն գործածութան մեջ դնել ձմեռվա արաթը տարեց տարի ավելի շատ տարածութունների վրա, վորը կոգտագործի տարվա ընթացքում ազատ ջրերը և կտա մի շարք ոգուտներ, վորի մասին խոսվեց մանրամասը հատուկ գլխում:


Պետք ե իմանալ ջուրն ոգտագործելուց

հետո հողում պահել այգախին՝ հողը փխրեցնել, մաքրել մոլախոտերից և այլն:

Այս բոլորն այն ազրո-ձեռնարկումներն են, զորոնք շատ կարևոր են ջրի ուսցիոնալ և նպարտակահարմար ոգտագործման համար:


Ակոսներով կամ առուներով ջրելու ձևն այն կատարելագործված, նպատակահարմար և մեքենայացման հնարավորութիւնն ստեղծող ձևն է, վորը պետք է այսուհետև լայն գործածութեան մեջ մտցնվի Հայաստանում:

Այս ձևի եռթիւղներ կայանում է նրանում, վոր մարզեր չի կուզմվում ջուրը թողնվում է բամբակի շարքերի միջով հատուկ ակոսներով կամ առվակներով: Այդ ակոսները քաշվում են (նկ. № 11) ցուլց արված կուլտիվատորով, վորին հարմարեցվում է բկատու գութանի խփերը:



Նկ. 11. «Պլանետ» կուլտիվատորը, վորը պատրաստված է ջրելու ակոսներ բանալու համար:


Ակոսներն արվում են 11 սնտիմ.—27 սնտ. ($2\frac{1}{2}$ —6 վերջով) խորութեան (նկ. № 12). Խորքաշված ակոսները ձեռնաու են. ջուրն այգախին ակոսներով հոսելիս ավելի շատ է ծծվում և հասնում բույսի արմատներին, մանավանդ վոչ թափանցիկ ծանր հողերում:



Նկ. 12. Ցանքուց առաջ փորած արտը ակոսներով ջրելու:

Յերբ վոր ցանելուց հետո շարքերի միջով բկատու գործիքով կամ կուլտիվատորով քաշված է ակոս, այն ժամանակ գութանով անց են կացնում գրանց ուղղահայաց արտի ափով խորն առու և ուղղում բահերով (նկ. № 13):

Սկզբում այդ առուն է թողնվում ջուրը, վորից արդեն բաշխվում հերթով միջշարքային ակոսներին:



Նկ. 13. Գաշտը ակոսներիով ջրեւը. ջուրը առվից ջրոտար բայ թողնելն ու ակոսներն տալը:

Մեծ առվից միանգամից ջուրն ակոսները թողնել չի կարելի, վորովհետև կքանդի թե առուն և թե միջարքային ակոսները, վորից հետո կվողողի ամբողջ գաշտը: Իրա համար լավ է դնել մայր առվի վրա ջուրն ակոսների բաշխող այրված կավե խողովակներ կամ հատուկ տախտակե շղուղիներ:

Այդ հարմարությունները կաշահպանեն ջրատար առունները, փշանալուց և զանազան վնասներից:

Ջուրը միջարքային ակոսներն ընկնելուց պետք է գնա դանդաղ հոսանքով և չոլետք է

բարձրանա մինչև ակոսի բերանը, այլ լինի այնպան, վոր կանոնավոր ծծվի:



Նկ. 14. Ամառը բամբակի արտը ակոսներիով ջրեր:

Հակառակ պայմաններում հետևանքը պարզ է՝ կվողողվի գաշտը կամ արագ հասելով հողը լավ չի ծծի ջուր:

Թեք հողերում այդ ջրային սիստեմը պետք է դասավորել այնպես, վոր փոքր ուղիներ չառաջանան:

Մանր կավային հողերում ակոսների յերկարությունը պետք է անել 150-200 մետր, միջինը 175 մետր, իսկ թեթև թափանցիկ հողերում 80 մետրից վաղ ափել:

Ակոսներով ջրելիս ինկատի ունենալ հետև-
յալ կանոնները, միանգամից շուրջ չթողնել ա-
կոսները՝ սկզբում քիչ և յերբ կթրջվեն ավերը
և կսկսի ծծվել կարելի է շատացնել: Թափանցիկ
ավազոտ հողերում քանի վոր շուրն ազատ ծրծ-
վում է, կարելի է բաց թողնել մեծ հոսանքով:

Թեք դաշտերում շուրջ թողնել քիչ և դանդաղ:
Յերբ շուրջ հասնում է ակոսի ծայրը, թող-
նել մի քանի ժամ ջրի հոսանքը նրա վրա, վոր-
պեսզի լավ ծծվի:

Այս ձևով ջրելուց յերկու ակոսների արան-
քում ընկած հողն ամբողջովին հաջնում է ջրով,
շուր ծախսվում է քիչ, բաշխումը համաչափ և
չի գոյրջիանում այն արագությամբ, ինչ վոր
մարգերի ժամանակ:

Միևնույն քանակի ջրով ակոսներով ջրելու
դեպքում կարելի է բավարարել $1\frac{1}{2}$ հեկտար
տարածություն, իսկ մարգերով 1 հեկտար:

Պարզ է այս ձևի ջրելը հարմար է միմիայն
շարքացանքի դեպքում, վորն իրեն հերթին ինչ-
պես բացատրվեց բարձրացնում է բերքը:

Նրա համար ել առաջին հերթին կոլխոզները
պետք է անցնեն այս ձևի ջրելուն, որինակ ցուլց
տալով անհատ անտեսություններին, վորով հնա-
լավոր կլինի խնայելով ջրային միջոցները, ըն-
դարձակել բամբակի տարածությունը:

Այս ձևի ջրելը ավելորդ է դարձնում միան-
գամայն մարկոսի աշխատանքը և խնայում ավե-
լորդ աշխատավոր ձեռքեր՝ դաշտը պատրաստե-
լուց, շարքացանից հետո անցնում են ակոսներ
քաշելուն ձիով: Բացի այդ կարիք չի լինում
ամեն ջրելուց հետո փխրեցնել հողը, կտարել
կեղևը, վորովհետև շուրն անցնում է միմիայն
ակոսներով և այնտեղից ծծվում. ամենաշատը
կարիք լինի ակոսները փխրեցնելու, վորը կարող
է մի աշխատավորը մի պատանիով և մի ձիով
կատարել $1\frac{1}{2}$ հեկտարի վրա:

Ինչպես ասվեց շուրջ չի գոյրջիանում, վո-
րովհետև ծծվում է խորը և կողքերի վրա, հա-
մարյա գետնի լերես չի դուրս գալիս:

Վերև թվածս ակոսային ձևի ջրելու բոլոր
առավելությունները ստում են այն, վոր առանց
ուշացումների և տատանումների պետք է անց-
նել այդ սխտեմի ջրելուն, վորը միևնույն ժա-
մանակ հնարավորություն կտա լրիվ մեխանի-
զացիայի յենթարկելու բամբակի մշակությունը,
այն է մի քանի շարքացանների գործածելը և
այլն:

Այժմ կանգ առնենք, թե յերբ յեվ բանի
անկամ պե՛տ է քե՛լ բամբակը:

Բամբակի առաջին շուրջ տալու համար բո-
լորովին չպետք է շտապել: Վորքան հնարավոր

ե այդ պետք ե հետաձգել, վորովհետև այդ շըր-
 ջանուածն ե վոր բամբակի արմատներն ավելի
 խորն են թափանցում հողի մեջ խոնավութիւնն
 վերցնելու նպատակով: Այդ ե պատճառք, վոր
 սկզբնական շրջանում բամբակի բույսը շատ դան-
 դաղ ե աճում, իսկ հետո շատ արագ կերպով
 զարգանում, վորովհետև արդեն ունենում ե ու-
 ժեղ ճյուղավորված արմատ, վորը հողի գանա-
 դան շերտերից սնունդ ե հասցնում բույսին:

Առաջին շուրջ շուտ տալուց բամբակի ար-
 մատներն այլ ևս կարիք չեն ունենում հողում
 խորանալու ջրի հեռակից և գանելով նպատա-
 վոր միջավայր հողի վերնաշերտում, հենց այդ-
 տեղից ել արմատը ճյուղավորվում ե և կանգ
 առնում: Այս դեպքում բույսը թեև լավ ե աճում,
 բայց հետագայում այդպիսի արմատներով տա-
 լիս ե միմիայն բացասական արդուունք, վորովհե-
 տև վերնաշերտի դյուրամարտ-բերրի սննդանյու-
 թեր պետք ե ոգտագործվեն միմիայն ծաղկման
 և կնգուղների հասունանալու շրջանում, այն ինչ
 ոգտագործվել են ժամանակից շուտ աննպատա-
 կահորմար ձևով:

Առաջին շուրջ պետք ե տալ մոտավորապես
 ցանցսից 40—50 որ հետո, յերբ սկսում են
 առաջանալ կոկոններ: Այնուամենայնիվ դա չի
 նշանակում որերբ համարելով 40 կամ 50 որ

լրանալուց պետք ե անմիջապես ջրել: Ջրելու
 կարիքը պետք ե վորոշել բամբակի բնդհանուր
 տեսքից:

Յեթե բամբակի տերեւների կանաչ գույնը
 վորսվում ե կապույտի և ցերեկվա թառամած
 տերեւներն այլևս առաջնայան չեն ուղղվում,
 մնում են այդ դրության մեջ, դա նշանակում ե
 բամբակը ծարավ ե. պետք ե ջրել: Իսկ յերբ
 առաջնայան տերեւներն ուղղվում են և բույսն
 ունի կայտառ տեսք, նշանակում ե հողում ա-
 ոայծամ կա խոնավութիւնն և ջրելը կարելի ե մի
 քանի օրով հետաձգել:

Իսկ յեթե ջրելու շրջանում գանազան պատ-
 ճառներով հնարավոր չե շուր տալ պետք ե ծալ-
 րահեղ դեպքում հողը փխրեցնել կուլտիվատորով

Այսպիսով

1. Առաջին շուրջ տալ ծաղկելուց մի քանի օր
 առաջ, իսկ հետագայում, յեթե ամառը շատ շոգ
 ե, պետք ե տալ մինչև 4 շուր ծաղկելուց հաս-
 նելը ժամանակամիջոցում: Բայց 4-րդ շուրջ
 պետք ե տալ վոչ ուշ ոգոտոտսի 15-ից, այլա-
 պես բամբակի հասունանալուց 2—3 շաբաթ
 առաջ:

2. Յեթե ամառը շոգ չե կարելի ե բավա-
 կանանալ 2 ջրով, ապիւրացրած կանոնավոր խնամք:
 Յերաշտոտ և ցրտերն ուշ սկսվող շրջաններում

վերջին ջուրը կարելի է 7—10 որ ուշացումով տալ:

Ուշ ջրված բամբակը ուշ է հասունանում, վարակվում է շիրայով, վորի քաղցր արտադրությունը փչացնում է բամբակի թելերը, իրար կպցնում, հումուլթը ընկնում է աշնան անձրևների, ցողի տակ և ընկնում վորակով:

Բամբակի կանոնավոր ջրելը տալիս է խնայողություն, վորով կարելի է ընդարձակել բամբակի կուլտուրան և ստանալ շատ բերք:

Կուլեկտիվ սնանուլթյուններում ջրային և ազրոմինիումի գործադրումը, մեքենաների լրիվ բեռնվածությունը տալիս է զգալի եֆֆեկտ, բարձրացնում բերքը և տարվում աշխատանքը գիտականորեն կազմակերպված:

XII. ԲԱՄԲԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բերքատվության բարձրացման, տեղական կլիմայական պայմաններին հարմարեցնելու և արդյունաբերությանը լավ վորակի հումուլթ մատակարարելու տեսակետից խոշոր նշանակություն ունին բամբակի տեսակները:

Մեզ մոտ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում մինչ պատերազմյան շրջանը տարածված էր կարակողա կոչված տեսակը, վորի հայրենիքը Աֆրիկան է և հասել էր մեզ Պարսկաստանի վրայով:

Վորակով այս տեսակը շատ ցածր է՝ ունի փոքր, կլոր և դժվար բացվող կնգուղներ, վորի համար պահանջում են ավելորդ աշխատավոր ձեռքեր միջից բամբակը քաշելու համար. Կարակողան ունի կարճ ու կոպիտ վոչ գեղեցիկ գույնի թելեր, տալիս է քիչ սոկոսով թել (20% — 25%): Կարակողայի դրական հատկությունը նրա քիչ պահանջկոտ և շորության զիմացկուն լինելն է, վորի համար և մշակվելիս է յեղել, չնայած չնչին բերք էր տալիս:

ժամանակի ընթացքում Հայաստան են բերվել շատ տեսակներ, վորոնք սակայն մեր տեղի հողային, կլիմայական պայմաններին չհարմարելով կորցրել են իրենց գնահատելի հատկությունները և սովել բացասական արդյունք:

Տեսակներից միմիայն կինգն է հարմարվում Արարատյան դաշտի պայմաններին, վորը համեմատաբար տալիս է մեծ բերք, շուտ է հասնում և ունի յերկար թելեր: Պատերազմից առաջ Արարատյան դաշտը գլխավորապես կինգի մշակությամբ էր բռնված:

1921-22 թվականներին գլխ. բամբակիումը բերել է տալիս Ամերիկայից կինգ և այլ տեսակի բամբակի հունդ և այդ թվականներում է վոր Թուրքեստանից Հայաստան են ներմուծվում կինգը, վորովհետև 1918—21 թվականների բամբակի

դանքսի ընդմիջումը զրկեց Հայաստանի բավականորձներին տեղական կինգից:

Հեղափոխութունից առաջ Ղարայազի փորձադաշտում դուրս ե բերվում «կինգ Ղարայազի» կոչված վաղահաս տեսակը, վորից տարածվում է նաև Հայաստանում:

Չնայած կինգը չի ներկայացնում իրենից միանգամայն մաքուր տեսակը, վորովհետև ունի զանազան տեսակի սերմերի խառնուրդ, այնուամենայնիվ շնորհիվ Գլխբամբաչկոմի սելեկցիոն կայանի աշխատանքների 1932 թվականում արգեն կուեննանք մաքուր տեսակի կինգ և ուրիշ տեսակները, վորոնց թվում և «Նավրոցկին», վորը դարձյալ մեզ մոտ գնում է մեծ հաջողությամբ:

«Նավրոցկի» տեսակը, վորը ստացվել է Անդրկովկասի փորձադաշտում 1913 թվականին, իրենից ներկայացնում է այսպես կոչված միջին-ուշ հասնող, խոշոր կնգուղներով բերքատու տեսակ: Նա ընդունակ է լրիվ ողաագործելու ամբողջ վեգետացիոն շրջանն, այսինքն բույսի գարգացման ամբողջ բարենպաստ ժամանակաշրջանը, շատ դիմացկուն է և համեմատաբար յերաշախն և տալիս է մեծ եֆֆեկտ խնամքի, պարարտացման և ուսցիոնալ շուր տալու գեպրում:

Շատ խոնավությունից և հարուստ հողե-

րում յերկարացնում է հասունանալը, Գարնանը և աշնանը տաք, փափուկ և խոնավ յեղանակներին ընդունակ է վարակելու շիրայով, վորից բամբակը կեղտոտվում է արտադրված մածուցիկ նյութից:

Բացված կնգուղներից հեշտությամբ բամբակը թափվում է գետին. շնորհիվ այդ հանգամանքի և կնգուղների խոշորության դյուրումությամբ հավաքվում է բամբակը և այն էլ շատ մաքուր: Մտնածագործության մեջ թելերի հատկությամբ հաշվվում է միջակ վորակի:

«Նավրոցկին» մեզ մոտ բամբակացանների սերված և ընդունված տեսակն է. նա ընդհանրապես Սորերգային Միության մեջ բուծում է տարածության 60% -ը: Նրա միջին բերքը հասնում է 70 փթի, Հրազդանի և Զանգիբասաբի շրջաններում միջին բերքը շատ գյուղերում հասնում է 100—120 փթի:

Շատ կարևոր է Նավրոցկու ցանքար ժամանակին կատարելը, վաղ ցանքսերը ապրիլի 10-ից և ուշ մայիսի 20-ից բերքը իջեցնում է 20—30% -ով: Մինչև ծաղկելը պետք է ջրել մեկ անգամ, իսկ ծաղկման շրջանում 3—4 անգամ: Առաջին ջուրը պետք է վոշ ուշ բան ծաղկման սկիզբը տալ (յերբ կծաղկի 10—50% -ը բույսերի:)

Յերբ հասունանալու շրջանում սկսում են

բացվել կնդուղները, պետք է ջրել միմիայն մեկ անգամ:

Ինչպես հայտնի է կլնագը և Նավթոցկին մինչև հիմա Հայաստանի ընդունված տեսակներն են, վորոնց մաքուր տեսակները ստեղծելը սեւեկցիոն կայաններում կզարձնի նրանց տնտեսապես ավելի բերքատու և ղիմացկուն տեսակներից:

Կայանների անդուլ աշխատանքը հնարավորութուն կտա ընարութամբ ստեղծելու Հայաստանի կլիմայական պայմաններին համապատասխանող ավելի թանգարժեք յեգիպտական տեսակները և այնպիսիները, վորոնք մեկ անգամ ջրվելով և կամ չորային շրջանում հարմարվելով հնարավորութուն կտան բամբակի տարածութունը գցելու նաև նախալեռնային շրջաններում, վորով կապահովվի մեր արդյունաբերութունը անհրաժեշտ քանակի հումուլթով:

VIII. ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՆԱԿԱՔԸ

Բամբակի ցանելուց մինչև հատուանալը կախված է զլխավորապես յեղանակների տաքութունից, վորքան բարձր է ջերմութան աստիճանը միջին հաշվով, այնքան շուտ է համուում բամբակը և ընդհակառակն, յերկրորդ Ֆախտորը, վորը կարող է յերկարացնել բամբակի հասունացումը, դա հողի և ողի համեմատական խո-

նավութունն է: Հասունացման տևողութունը և բերքը կախված է ջրային սնուցման պայմաններից և կնդուղների բամբակի թելի դարգացման շրջանում բույսի լարված խոնավության զուրըջիացնելուց, ըստ վորում բերքի քանակը սերտ կերպով կախված է մի շարք պայմաններից:

Կնդուղների մեծութունը զլխավորապես կախված է բամբակի տեսակից և նրա սնուցման պայմաններից: Վորքան վերջինս, այսինքն սնունդը լավ է, այնքան ել խոշոր են լինում կնդուղները:

Բերքի և լավ վտուղվող հողերում նրանք ավելի մեծ են, քան հակառակ պայմաններում, ներքեկից Պառաջին կնդուղներն ավելի խոշոր են, քան վերջին ծայրինը և այլն:

Ընդհանրապես տարբեր տեսակների բոլոր այդ հատկութունները փոխվում են մի կողմը և լինում են գանազան, յերբ փոխում ենք նրանց դարգացման պայմանները: Ավելի ուժեղ և հարուստ հողերում բամբակը համեմատաբար ուժ է ստանում, իսկ ուժից ընկած քարքարոտ հողերում բամբակը փոքր թփեր է տալիս, շուտ է համուում և բերքն ել քիչ է լինում:

Բամբակի տեսակներից է կախված նաև շուտ ու ուշ համանելը. կան վաղահաս, ուշ հաս-

նող և նրանց միջին ժամանակաշրջանում հաս-
նող տեսակները:

Բամբակի ցանելուց 50 — 60 որ հետ բամ-
բակը սկսում է ծաղկել և մի այդքան ժամա-
նակից ել հետո հասած կնգուղները սկսում են
բացվել:

Բամբակի թփերը միաժամանակ չեն ծաղ-
կում, ինչպես և կնգուղները հասունանում:

Միևնույն թփի ցածրի ծաղիկներն ավելի
շատ են թափվում, քան վերինները. նույնը և
կնգուղների վրա կարելի չէ ասել — ցածրի կըն-
գուղներն ավելի շատ են թափվում քան վերին-
ները և այդ հերթականությամբ ել հավաքվում
է բամբակի բերքը: Առաջին բերքը հավաքում
են ներքևի կնգուղներից, յերկրորդը՝ միջին և
յերրորդը բույսի վերին մասից — ծայրից:

Ոպտոտոսի յերկրորդ կիսից արդեն սկսում
են բացվել կնգուղները — հասունանալ բամբակը:

Սակայն բամբակը յերկար դաշտում թաղ-
նել չի կարելի, վորովհետև կեղտոտվում է թո-
ղից, անձրևներից, թափվում են հողի մեջ, դրա
համար ել ոգավելով պարզ նպաստավոր յեղա-
նակներից պետք է սկսել հավաքել և փոխա-
դրել տուն:

Բերքահավաքը պետք է արագացնել նաև
նրա համար, վոր աշնանից առաջ են գալիս գա-

նաղան հիվանդութուններ, ինչպես շերան և
այլն, վորոնք իջեցնում են բամբակի վորակը:

Բացի այդ անձրևներից դեղնում է բամ-
բակը, խիստ ընկնում վորակը, իսկ գետին թափ-
ված-կեղտոտած բամբակը դժվարացնում գոր-
ծարանում մաքրելը:

Միևնույն բամբակի շանաքին անցնելը կա-
մուր է նաև վորոշել՝ արդյոք բամբակը հասու-
նացած է թե վոչ: Իրա համար փորձում են
հունդը ստամով. յեթե ձայն է հանում, կնշա-
նակի հասունացած է թե սերմը և թե բամբակը:
Չհասունացած բամբակից ստացվում է վորա-
կով ցածր տեսակի գործվածք:

Բոլորից բարձր գնահատվում է մինչև աշ-
նան ցրտերի վրա հասնելը հավաքած բամբակը,
վորը սալիս է վորակով բարձր ապրանք: Նա
բոլորից հասունացած մաքուր բամբակն է: Յե-
թե սառնամանիքները ընկնում են և չորանում
է բամբակի բույսի տերևներն, այն ժամանակ
և բամբակի բույսի կեղտոտվում է չոր տե-
բամբակը հեշտութամբ կեղտոտվում է չոր տե-
րևների կտորներով և իջեցնում վորակը: Իրա
համար ել բամբակացանը պետք է լավ ըմբռնի
մինչև սառնամանիքների ընկնելը հավաքի բո-
լոր բացված կնգուղների բամբակը:

Շատ սխալ են վարվում նրանք, վորոնք
սպասում են մինչև բոլոր կնգուղները բացվեն,

հետո անցնեն չանաքին. այդ ձևի հավաքած բամբակն ունի վատ վորակ—լավ ու վատ իրար խառը, կեղտոտած, դեղնած բամբակ:

Հավաքած բամբակը հարկավոր է անմիջապես հանձնել գործարանին կամ ընդունման կայաններին, վորովհետև ուշացնելը վնաս է կառավարութեանը՝ թե վորակն է փչանում և թե խախտում է պլանային աշխատանքը, ուշացնում հումուլթի ժամանակին մատակարարելը տեքրուտի վործարաններին:

Ամեն մի բամբակացան պետք է լավ իմանա հետևյալը՝

1. Չհավաքել վաղ առավոտյան գովին, անձրևային լեղանակներին, ինչպես և չհասունացած բամբակ, վորովհետև պարունակում են իրենց մեջ մեծ քանակութամբ խոնավութիւն: Անձրևներից հետո սպասել մինչև նորից չորանալը, կամ հավաքած չորացնել:

2. Մինչև սառնամանիքների վրա հասնելը հավաքել բոլոր բացված կնգուղների բամբակը, ալլապես կփչանա բամբակը—կիջնի վորակը:

3. Պաշտպանել բամբակը հողից և այլ կեղտոտութիւններից և առաջին տեսակին չխառնել դեղնած և չհասունացած բամբակ: Հանձնել բամբակը տեսակավորված, դրա համար չանաքի

ժամանակ լինել ուշադիր և բարդանները լցնել միմիայն մի տեսակի բամբակ:

Բամբակի բերքահավաքը հաջող անցկացնելու համար պետք է նախորոք լինի կազմված պլան և կազմակերպված աշխատավոր ձեռքեր բրիգադների:

Բերքահավաքի ծրագիրը հարկավոր է թե կուլելիտիվ և թե անհատական տնտեսութիւններին համար: Այսպեղ անհրաժեշտ է հաշվի առնելով աշխատավոր ձեռքերն ըստ սեղանների, այսինքն առաջին, յերկրորդ և յերրորդ չանաքի շրջանների տևողութիւն և բամբակի տարածութիւն կազմել որացուցային ծրագիր, վորը հնարավորութիւն կտա մեկը մյուսին ոգնութիւն գալու՝ կուլելիտիվին անհատ տնտեսութիւն, գյուղ գյուղին, շրջանները— շրջաններին և այլն:

Անհրաժեշտ է վոր ամեն մի գյուղացի յենթարկվի դիսցիպլինայի և աշխատի ծրագրված կերպով, չհամարի չանաքը կանացի գործ, վորպիսի հասկացողութիւնը և անդիսցիպլինարութիւնը վնաս կբերի թե անհատ տնտեսութիւնը, կոլխոզին իրեն և թե կառավարութիւնը: Կառավարութիւնն ամեն ջանք գործ է դնում ոգնութիւն գալու գյուղացուն, նրա գյուղատնտեսական աշխատանքների գծվարին մոմենտներին, ապահովի արդյունաբերութիւնը հումուլթով և

դրանով բարձրացնի ընդհանուր ժողովրդական տնտեսութեանը:

IX. ԲԱՄԲԱԿԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՍ

Բամբակի բույսը յենթակա յե մի շարք վնասատուների կողմից հարձակման, վորի պատճառով ամեն տարի տասնյակ և հարյուր հազարավոր փթերով քիչ բերք և սաացվում, քան հնարավոր և սուսնալ այդպիսին կանոնավոր և կազմակերպված պայքար մղելու դեպքում:

Քիչ չեն նաև սնկային հիվանդութիւնները, վորոնք ևս զգալի վնաս են հասցնում բամբակին:

Կան մի շարք սարսակների և ավերիչ վնասատուներ, վորոնցից Հայաստանում քարերախտաբար չկան. կան ուրիշ պետութիւններում, վորտեսիք են՝ Պարսկաստանը, Տաճկաստանը, Ամերիկան և այլն:

Այստեղ կհիշենք միմիայն այն վնասատուների մասին, վորոնք պատահում են մեր յերկրում և բավականաչափ վնաս հասցնում բամբակագործութեանը:

1. ԲԱՄԲԱԿԻ ՉՈՌԸ


Ամառվա ընթացքում, մոտավորապես հունիսին և հուլիսի սկզբներին բամբակի տերևներ

րի վերի յերեսին յերևում են կարմիր բծեր, վորոնք քանի զնում այնքան մեծանում են: Տերևի հակառակ ներքևի կողմը նկատելի յեն մոխրագույն բծեր, վորոնք հյուսվելով կազմում են ընդհանուր փառ: Ուշագրութեամբ խոշորացույցով դիտելու դեպքում հնարավոր և տեսնել այն վնասատուն, վորն առաջացնում և շոտ հիվանդութիւնը, դա տիգն և:


Բծերը քանի զնում այնքան լայնանում տարածվում են և վերջը բռնում ամբողջ տերևի յերեսը, թողնելով միմիայն տերևի կանաչ յերակները: Հետագայում տերևը սկսում և չորանալ, պատռվել, վորորվել և վերջը պոկվել և ընկնել գետին:

Ներքևի յերեսի մոխրագույն փառը տարածվելով բռնում և վոչ միայն տերևի ամբողջ յերեսը, այլև տերևի կոթով տարածվում և ճյուղերի վրա:

Տիգը սնվում և տերևի հյութը ծծելով և բազմանում ձվերով: Նա արագ կերպով զարգանում և վատ պատրաստված ուժասպառ չեղած հողերում, վորոնք վատ են ինամվում և չեն պարարտացվում: Նրանց զարգացմանը նըպաստում են նաև մոլախոտերը, վորովհետև շոտի վնասատուն ապրում և ինչպես մոլախոտերի, այնպես ևլ մի շարք այլ կուլտուրական և վայրենի բուսականութեան վրա:



Նկ. 15. Չոսի՝ փառ գործող վնասատուն. վերևում եղբ, ներքևում, դե գի ձախ— փորձը և փտտերի մեջ, ձվերի մոտ չորս փոտանի թրթուր:



Նկ. 16. ա. Բամբակի տերևներ— ինչպես վնասված բամբակի վնասատուի կողմից:
բ. Բամբակի թուփը— տերևներից զրկված չոսի հետևանքով:

Վնասատու տիգր բամբակի դաշտում հեշտությամբ հողում, տերեխի, կնգուղի և այլ բուսական մնացորդների մեջ ձմեռում և և հաջորդ տարին նորից անցնում ցանված բամբակի վրա և բազմանալով վարակում նրան:

Չոռի առաջն առնելու համար հարկավոր են հետևյալ ձեռնարկումները.

1. Հեռացնել բամբակի դաշտից բոլոր մուխոտները, բուսական մնացորդները, հողը հերկել խորը, թողնել առանց փոցխելու ձմեռվա ցուրա շրջանում, շրել—արաթ անել, վորը կրնալաստի թե մուխոտների արմատները ցրտահարելուն և թե շոռի արդերին վոջնացնելու: Նույն նպատակով վարել բոլոր միջնակները:

2. Բամբակի ցանքը կատարել վոջ շուտ և վոջ ել ուշ՝ իր ժամանակին և այն ևլ շարքացան. դա կնպաստի բամբակի ուժեղ փարթամ աճելուն և շուտ չի վարակվիլ շոռով: Պարարտացնել հողը ժամանակին:

3. Իր ժամանակին հողը փխրեցնել ձեռքի քաղհանիչներով, վորից հետո ձիու կուլտիվատորներով, շրել և անցկացնել ձմեռվա արաթ և այլն:

Այս բոլոր ձեռնարկումներն անշուշտ շատ քիչ զեպքում թույլ կաան վարակվելու դաշտը շոռ հիվանդությամբ. իսկ յերբ արդեն բամբակը

վարակված և հատուկ փորիչ մեքենայով կամ ձեռքի փուքսով արար փոշտակ ծծումքի փոշիով, վորն ամենափորձված և ուղիունայ միջոցն և նրա դեմ:

Յեթե բամբակը դեռ չի վարակվել կամ վարակը նոր և սկսվել, մեկ հեկտարին գործ են ածում 20—25 կիլո ծծմբափոշի, իսկ ամբողջովին վարակված լինելու դեպքում 48—50 կիլոգրամ:


Ծծմբափոշի պեպք և տալ վաղ առավոտյան, յերբ դեռ տերևների վրա նկատվում և խոնավությունն ցողից, հակառակ զեպքում առանց քամի—հանդարա սր, բայց վոջ կեսորի շագին, այլ առավոտը և յերեկոյան:

2. ԱԳՐՈՏԻՍ ԿԱՄ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԹՐԹՈՒՌԸ

Այս վնասատուն թաղնվում և ցերեկը հողում 7—9 սանտիմետր խորության վրա, զիշերը դուրս գալիս հողի յերես և թիլից թուփ անցնելով կրծում, վաղ առավոտյան թաղնվում հողում և կծկված մնում մինչև զիշեր:

Ազրոտիսը վնասում և միայն բամբակի մատաղ բույսերին: Նրա վնասն սկսվում և այն ժամանակից, յերբ բամբակի սերմը սկսում և ծլել: Այն ժամանակ թրթուրը մտնում և մեջը և սկսում կրծել շաբլիները, իսկ հետագայում՝

յերբ հողի յերես ե դուրս դալիս բույսը, սկսում ե կրծել բամբակի մատղաջ ցողունը, հողի յերեսից կտրում ե մնացորդը քաշում բուն, այնտեղ խժուում:



Նկ. 17. Թրթուր, վեր լնասում ե բամբակին ու մատղ ծիլերին:

Ամբողջ ամառվա ընթացքում ազրոտիսը տալիս ե յերկու-յերեք սերունդ ե ամեն անգամ դարգացման համար պահանջվում ե 30—40 ուր: Բամբակին վնասում ե դլխավորապես մայիսի սերունդը:

Թրթուռի վերջին սերունդը աշնան ցրտերն ընկնելուց մահում ե միջանի վերջով խորու-

թյամբ հողի տակ ե քնում մինչև գարուն— ապրիլի վերջերը:

Ազրոտիսի զարգացման տառջին շրջանն անցնում ե մուխտոտերի վրա, վորից անցնում ե մատղաջ բամբակենուն, հենց վոր յերևում են նրա ծիլերը:

Պայքարի ամենալավ միջոցն աշնան խոր ցելն ե, ձմեռվա արաթը ե միջնակների վարելը՝ մուխտոտերի փոչնչացնելը, վորոնք վաղ գարնունը ծառայելով վորպես կերակուր, պատասպարվելու տեղ, միջնորդ—կամուրջ են հանդիսանում բամբակի վարակմանը:

Դեղով պայքարելու համար վերցնում են 400 գրամ մարիզյան կանաչ ե լավ խառնում 8 կիլոգրամ քուսպի ալյուրի կամ ալդպիսին չունենալու դեպքում յեգիպտացորենի ալյուրի հետ ե ջրով շաղաղ անելով շաղ տալի փոքր կտորներով բամբակի դաշտում:

Փարիզյան կանաչը փոխարինում են նաև մկնդեղի նատրիումով: 400—500 գրամ մկնդեղի նատրիումը ածում են 1 դույլ (12 լիտր) ջրի մեջ. այդ լուծույթում թրջում 10 կիլոգրամ քուսպի ալյուր, հուռցում ե ստացված խմորներից փշուրներ անում շաղ տալիս հողը վարելիս կամ բամբակը ցանելուց անմիջապես հետո ե փոցխում:

Հողի տակ ապրող աշրտախոր ուգտագործելով այդ փշուրները վոչնչանում եւ Միաժամանակ պարքարի այս ձևը ծառայում եւ փորպէս պարարտանյութ հոգում:

Յեթե հետագայում կենդանի մնացած թրթուռները յերևան, կարելի չե նույն ձևի պատրաստած թուխը նորից շաղ տալ բամբակի արտում մի-մի գլխի, մի ը քալլ հետափորության վրա:

Դեղը պետք ե շաղ տալ իրիկնադեմին, փորովհետև թրթուռը դուրս ե պալիս իրիկնադեմին ե փաստում ամբողջ գիշերը:

Նկատվել ե, վոր անցյալ տարիներում շալթուռի մշակված հողերը վարակված ին ազրոտիսի թրթուռներով: Այդպիսի հողերի շուրջն անհրաժեշտ ե առու քաշել 27—35 սանտիմետր խորությամբ, վորի մեջ են թափվում թրթուռները—վոչնչացվում ե այդ ձևով պաշտպանվում բամբակի մնացած ցանքները:

3. ԿԱՐԱՂԻՆԱՆ.

Կարաղրինան փաստում ե բամբակենուն կրքծելով նրա տերևները, կլոր ծակեր առաջացնելով, առանց տերևների յերակներին փաստելու:

Նա փաստում ե նաև ճակնդեղին, կարտոֆիլին, առվույտին (յոնջա), պամիդորին ե սոխին:

Վերջինիս փաստում ե տերևը կլոր ծակելով ե ներս մտնելով կրծում են. բացի տերևները, փաստում են նաև պամիդորի պտուղները:

Կարաղրինան բազմանում ե ձվերով. ձվից դուրս յեկած թրթուռի մեծութունը $2\frac{1}{2}$ սանտիմետր ե, լայնութունը 3—4 միլիմետր:

Թրթուռը սկզբնական շրջանում ձվից դուրս գալուց հետո կրծում ե տերևի ներքևի յերեսը, չփաստելով մյուս յերեսը: Հետագայում ծակում ե տերևի սողավարթը առանց փաստելու խոշոր յերակներին:

Թրթուռը հարսնյակի յե փոխվում հողում, վորից դուրս ե դալիս թիթեռ. վերջինս ձու յե ածում տերևի ներքևի յերեսին ե նրանցից դուրս յեկած թրթուռներն են վոր փաստում են գարնանից: Կարաղրինան ամառն ունենում ե ընդամենը 4 սերունդ: Վտանգավորը բամբակի ե դեռևս թված այլ կուլտուրաների համար 1—2 սերունդն ե:

Պայխար.—Կարաղրինայի դեմ պալքարելու համար գործ են ածում փարիզյան կանաչի ե նոր այրած կրի լուծույթ:

30—35 գրամ փարիզյան կանաչը բացում են փայտյա ամանում քիչ քանակությամբ ջրով. առանձին ել բացում 60—68 գրամ կիր ե մաղելով խառնում փարիզյան կանաչի ե ալիքան

չուր ավերացնում, վոր ստացվի մեկ դուլլ լուծույթ և ածելով վերմորել կոչված սրսկիչ սպարատի մեջ, սրսկում բամբակին:

Մատղաշ բամբակենուն այդ լուծույթը կարող է վնասել, թույլ լուծույթն էլ չի ոգնի. դրա համար գործ են անում մկնդեղային թթու արծիճ (Չիպսին), վորով և փոշոտում են բույսին:

Մեկ հեկտարի վրա ծախսվում է 15—20 կիլո Չիպսին:

4. ՇԻՐԱ

Շիրան կամ բամբակի լվիճ վնասատուն ծանոթ է բոլոր բամբակացաններին: Նրանք վնասում են բամբակի տերևները ծծելով տերևի տակի յերեսից նրա հյութը, վորից նա կուշ է դալիս, գանգուր դառնում: Տերևի ներքևի մասում առաջանում է փայլուն քաղցր փառ, վորի վրա հավաքվում են բազմաթիվ ճանճեր, մրջյուններ, ոգտագործելու քաղցր հյութը: Փառի վրա նկատվում է նաև սև բորբոս:

Զգուշությամբ տերևը բացելով յերևում են բուսական վոշիլների կամ լվիճների ամբողջ խմբեր, վորոնք կանաչ ու մուգ գույն ունեն, փայլուն սև գլուխ, սև կուրծք և մի գույլ հյութի սև սուպրակներ:

Լվիճները շարունակ արտադրում են իրենց

մարմնի յեսին մասից վերոհիշյալ քաղցր հյութը, վորը վերիից կաթիլ-կաթիլ թափվում է բույսի ներքևի մասերի վրա և չորանալուց փայլուն տեսք ստանում:

Ամառվա չոր և շոգ յերանակին նրանց տարածումը կանգ է առնում, սակայն կարելի է տեսնել լվիճների խմբեր կնգուղների վրա, վորոնցից ծծելով հյութը, գեղնեցնում են և թափում:

Աշնան յերկարատև տաք նվաստավոր յեղանակներին նրանց բազմացումն արագ է բնթանում և արտադրած քաղցր հյութը թափվելով բամբակի բացված կնգուղների վրա, թրջում են ու իրար կպցնում: Այդ քաղցր շիրաի վրա բուն են դնում սև սնկեր և բակտերիաներ և սկսում քայքայել բամբակի թելիկները:

Այդպիսի բամբակը շատ վատ է մաքրվում գործարանում և ստացվում է կեղտոտ ու կրոշող բամբակ, վորը տալիս է վատ գործվածք և վատ էլ ներկ վերցնում:

Լվիճները զարգանում են շատ մեծ արագությամբ՝ կենդանի ձագեր ծնելով, վորոնք առաջին որից սկսում են սնվել ինքնուրույն կերպով: Մի շաբաթ հետո այդ նույն ձագերը կարող են բազմանալ, վորպես կենդանի ծնող մայ-

բեր: Այդպիսով մեկ լվիճ մեկ ամառվա ընթացքում տալիս է 14—20 սեբունգ:

Սակայն այդ ամբողջ սեբունգը չի կարող բաղմանալ շարունակ և վնասել, փորովհետև ունեն հատուկ զիջատիչ թշնամիներ, փորոնցից է գատիկը և այլն:

Լվիճները բազմանում և վնաս են հասցնում նաև բանջարեղեններին, փորպիտի ցանքսեր բամբակի կողքին միշտ ել անթուլլատրելի չե: Միջնորդ դեր ունեն նաև մոլախոտերը, փորոնք նույնպես փարակվում են լվիճով և կեր ու պատարան հանդիսանում աշնան ցրտերն ընկնելուց հետո, յերբ մեռնում է բամբակի թուփը:

Իրա համար ել շերայի դեմ լավագույն պայքարը հողի կանոնավոր մշակելն է, աշնանավարը, քաղհանը, ժամանակին ջրելը, նոսրացումը և այլն: Մի քանի անգամ հնձել միջնակները, առունները, ճանապարհի յեզերքների մոլախոտերը: Այդպիսի պայքար ևս մղել հարևան դաշտերում, փորտեղից փարակը կարող է անցնել ամեն ուղղությամբ:

Թոնավ յեղանակներին լվիճն արագ է զարգանում. դրա համար ել պետք է ջրել չափավոր և հողը փխրեցնել խոնավություն, պահպանելու համար հողում, փորն ուժեղ կղարգացնի

բամբակին և կղարձնի ավելի դիմացկուն առհասարակ վնասարարների դեմ:

Լվիճներին կարելի է փոշնշաղնել կանաչ կամ հատարակ սապնի լուծուլթով՝ 400 գրամ սապոնը լուծվում է մեկ գուլ (12 լիտր) ջրի մեջ: Սապոնը հեշտ է բացվում տաքացրած առփի ջրում:

Կարելի է պայքարել նաև ծխախոտի փոշույ պատրաստած լուծուլթով (400 գր. փոշին 24 լիտր ջրում): Այդ զեղերից մեկով սրակում են բամբակի թփերը, փորոնք հաջողությամբ փոշնշացնում են վնասատուներին:

Լուծուլթի թնդության, պատրաստելու և սրակման ձևի մասին պետք է դիմել շրջապատումին անհրաժեշտ ցուցմունքներ ստանալու համար:

5. ԿՆՔՈՒՂԻ ԹՐԹՈՒՌ

Բամբակի վրա կոկոնների, ծաղիկների և մատաղ փարսանդների յերևալու շրջանում նկատելի չե, փոր նրանց մեծ մասը և առանձնատես տեղի յե, փոր նրանց մեծ մասը և առանձնատես կոկոնները գետին են թափվում: Գետին ընկած բաց դեղին գույն ունեցող կոկոնների վրա նկատելի յեն անցքեր, արված այն վնասատուների միջոցով, փորոնք ներքը կրծում, փոշնշացնում են ծաղկի կարևոր մասերը:

Դա կնգուղի թրթուռն է, վորը վնասում է նաև պամիրներին, լեզիպագորենին, սիսեոին՝ նոխուղին, ծխախոտին, կենսաֆին և այլն, ինչպես և մի շարք մոլախոտերին:

Նրա զարգացման առաջին շրջանը ընթացում է մոլախոտերի վրա: Հայտնի է վոր թիթեռը պալիս է ձու, ձվից առաջանում է թրթուռ, վորը ձևափոխվում է հարմնյակի, նրանից էլ դուրս է գալիս թիթեռ և այդպես շարունակ:

Այս ամբողջը տևում է 34—46 օր, այնպես վոր մեկ ամառվա սեզոնում 3—4 և նույն իսկ 5 սերունդ են տալիս և հաշվելով ամեն մի թիթեռի ածած ձվերը, վորոնց քանակը 500—3000 հատի է հասնում, պարզ է վոր շատ արագ են բազմանում նրանք, ուրեմն և խոշոր վնաս հասցնում բամբակին:

Կնգուղի մի թրթուռը իր կյանքում կարող է վնասել մինչև ութ կոկոնի, մեկ ծաղկի, լերկու վարսանդի և մեկ կնգուղի և այլն: Այս հաշվով պարզ է թե վորքան մեծ է այս միջատի հասցրած վնասը բամբակազործությանը:

Նրանք կրծում են նաև ցողունների հյութալի ծայրերը և վերևից ներքև ծակեր բացում:

Թրթուռներն մատաղ կնգուղիներին ավելի շատ են վնասում, քան մեծերին և այդ պրոցեսսում արսազրում են մութ կանաչ արտաթորութուն, վորով և կեղտոտում կնգուղի պատերը:

Մի շարք ազրո-ձեռնարկումներով հնարավոր է առաջն առնել և մեղմացնել այն վնասները, վոր հասցնվում է կնգուղի թրթուռի կողմից:

Իրա համար հարկավոր է՝ աշնանից հողը խորը հերկել, արաթ անել, վորով կվոջնչացվի թե մոլախոտերը և թե թրթուռներն ու հարսնյակները: Բամբակը հաճախակի քաղհանել, վոջնչացնել շրջակայքի մոլախոտերը, պարարտացնել դաշտը—ուժեղ թփեր ստանալու նպատակով: Ժամանակին ջրել և փխրեցնել հողը:

Կատարել շարքացանք և ցանել վաղահաս դիմացկուն տեսակի բամբակի սերմեր:

Պայքարի ջիմիական միջոցներից գործարրվում է մկնդեղա-թթվային կալցիում, վորը փշվում է հատուկ փոշոտիչ գործիքներով—հեկտարին 30 կիլոգրամ: Փոշոտած տերևը կամ կնգուղը ձվից նոր դուրս յեկած թրթուռը կրծելով թունավորվում է:

Սակայն պետք է գտնել դեղ փշելու հարմար մոմենտը, վորպեսզի չուշացվի և թրթուռները չմտնեն կնգուղի մեջ:

6. ԴԵՂԻՆ ՏՐԻՊՍ

Այն ժամանակ յերբ բամբակի վրա յերևում են ըվիճները, այսինքն բամբակի առաջին խսկական տերևների առաջանալու շրջանում, այդ տե-

ընների ներքևի յերեսին յերևում են հարթ, փայլուն, մի քիչ ներս ընկած բծեր: Իրանից հետո յերևում են նույն տեղը մոխրագույն բծեր, իսկ տերևները սկսում են կուչ գալ, կլորվել, չոցացած տեղերը պատվել տաջացնելով անկանոն անցքեր: Հաճախ այնպես է ազդում բամբակի վրա, վոր բամբակագործը հուսահատվում է միանգամից:


Իժվար չե խոշորացույցով նկատել այդ հիվանդությունն պատճառին — արիպսին, վորն աչքի է ընկնում իրեն արագաչարժուխամբ:



Նկ. 18. ա. Բամբակի տերևը արիպսից վնասված,
բ. Բամբակի տերևը:

Նրանք իրենց ձվերը գնում են տերևի հյուսվածքում, վորից 3—4 որվա ընթացքում դուրս են գալիս վորդերը: Նրանց մինչև հասունանալը ակում է 9—12 որ — իսկ տարածվելը մեկ սերունդի համար պահանջվում է 20 որ:

Տրիպսերը ձմեռում են մուխտտերի և յունջալի վրա. նրանք իրենց արագաչարժուխամբ կարող են արագ կերպով մեկ դաշտից մյուսը փոխադրվել, վորի համար և դժվարում է պայքարը նրանց դեմ:



Նկ. 19. Բամբակի մատուշ բույսը արիպսի խիստ վնասված:

Ամենայնով պայքարը դա հողի կանոնավոր մշակելն է, պարարտացումը, մուխտտերի վորջնչացումը: Այս գալմաններում միայն բամբակը կարող է արագ կերպով ուղղվել արիպսի հասցրած վնասից հետո:

Գ. ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր յերկրի կլիմայական պայմանները բա-
 վականին բարենպաստ են մեզ համար փաստա-
 տու հիվանդութիւններ առաջացնելու նկատ-
 մամբ: Չոր կլիման յավազույն արգելէն է սըն-
 կային հիվանդութիւնների առաջն առնելու հա-
 մար: Մի յերկրորդ հանգամանքն էլ այն է, վոր
 Հայաստանը և այլ բամբակագործական խորհրդ-
 դային հանրապետութիւններ նոր բամբակա-
 ցան շրջաններ են, այնպես վոր բամբակագոր-
 ծական հին շրջանների ավերիչ փաստատուներից
 և սնկային հիվանդութիւններից առայժմ զերծ
 ենք մնացել: Դրա համար էլ պետք է զգուշը լի-
 նել չտարածելու հիվանդութիւններ:

Մնկային և բակտերիական հիվանդութիւն-
 ներից աչքի ընկնողը՝ արմատի փթումն է, վիլ-
 աը և հոմոզը:

Առաջինի հիվանդութեան պատճառը դեռ
 գտնված չէ: Հիվանդութիւնը վարակում է ար-
 մատները բամբակի մտտաղ շրջանում վաղ ցան-
 քերի դեպքում: Քանի վոր չի գտնված հիվան-
 դութեան առաջացնողը, դրա համար էլ դժվար
 է վորոշել պայքարի ձևը:

Վիլսը գարձյալ փաստում է արմատներին:
 Բույսը ուժասպառ է լինում և մեռնում, ըստ

փորում հիվանդութիւնը նկատվում է ամուսն
 վերջերը կամ կեսին:

Միակ պայքարը ցանքսից առաջ սերմերի
 աղտահանելն է:

Հոտոզը շատ քիչ տարածված բակտերիալ
 հիվանդութիւն է. նկատվում է բոլոր սրգանների
 վրա յուզոտ բծեր, յերիալուց: Ուժեղ վարակի
 դեպքում ցողունը սևանում է և կոտրվում: Պայ-
 քարի միջոցը սերմացվի ախտահանումն է:

X. ԲԱՄԲԱԿԻ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեր բամբակագործութեան ամենազլխավոր
 խնդիրը մեքենայացված խոշոր անտեսութիւն-
 ներ՝ խորհրդային և կոլտնտեսութիւններ կազ-
 մակերպելն է:

Դրա նշանակութիւնը մեծ է հին բամբա-
 կագործական շրջանների բամբակի բերքատու-
 թիւնը բարձրացնելու, զգալի էֆֆեկտ ստանա-
 լու տեսակետից, իսկ նոր հողերի վրա բամբա-
 կագործութեան շահավետութեան, նոր հողեր յու-
 րացնելու տեսակետից:

Բամբակագործական շրջանում, կուսակցու-
 թեան վորոշումներով ցաք ու ցրիվ անհատական
 տնտեսութիւններից նոր, խոշոր վերակառուց-
 ված կոլտնտեսութիւններ կազմակերպելը հնա-

բավոր և միմիայն մեքենայացման բազայի հիման վրա: Այդ տեսակետից Մեքենատրակտորային կայանները այն հզոր միջոցն են հանդիսանալու, վորոնք հիմնովին կվերափոխեն մեր արտադարական ձևերը, մեքենայացնելով բամբակի մշակման բոլոր պրոցեսները:

Յեթե մեկառմեկ թվենք բամբակագործության բնագավառում տարվող բոլոր աշխատանքները, մի ավելորդ անգամ ապացուցած կլինենք խոշոր արդյունաբերական կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների առավելությունները:

Մեքենայացված տնտեսությունում հողի խոր հերկն անցնում է աշնան սեզոնին. համայնացված խոշոր հողերում և տարվում համատարած շարքացանը և, դրա հետ կապված, այդտեղ և վոր պետք է գործածության մեջ դրվի ջրելունոր, կատարելագործված և ռացիոնալ ձևն, այն և միջարքային ակոսային սիստեմը:

Վերջինս խոշոր հեղաշրջում պետք է մտցնի մասնավորապես Հայաստանի բամբակագործության ասպարիզում, վորը լուծելու յե ջրի պրոբլեմը, ստեղծելու նախապայման մեքենայացնելու աշխատանքներն ավելի բարդ մեքենաներով, ինչպիսին է որինակ մի քանի շարքանի շարքացանների, Ֆարմոլի՝ 3 և ավելի շարքանի տրակտորային փոխարինելով ջրելու միջարքայի

տեխոններ քաշելու համար բկատու կուլտիվատորներով:

Բամբակացան շրջաններում խոշոր արդյունաբերական կոլլեկտիվ և խորհրդային տնտեսություններ կազմակերպելը մեքենատրակտորային կայանների ծավալվող աշխատանքների, մեքենայացման բազայի հիման վրա հարվածային արտադարական կարևորագույն խնդիրներից մեկն է, վորպիսին և պետք է լինի այդ ասպարիզում աշխատող մեր ազդու աշխատակիցների հերթական հարվածայինը՝ կիրառելու վերակառուցվող գլուզում գիտության վերջին նվաճումները հանուն սոցիալիզմի վերջնական հաղթանակի:



19.213

ԳԻՆԸ 17 ԿՈՂ.

(3¹/₂ մամուլ)



Բ. Мамян

Культура хлопка

Госиздат ССР / Армении
Эривань—1931